

14644

Ա. ՖԱԴԵՅԵՎ

ՅԵՐԵՒՄ ՄԱՅ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ ԽՈՐՏԱԿՈՒՄ, ՎԵԳԻՑ)



ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏ. ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ, 1931

05.09.2013

19 NOV 2010

2036

891.71	\$ 14	ՏՐԵՄԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ
--------	-------	--------------------

S. F	22/xx/56	
200	7/05/	
1613	30/xx/65	
D.F	20/xx/68	ԺԱՄԱՆ
V.L.S	6/05	14/18/

891.71
\$ - 14
Ա. ՖԱԴԵՅԵՎ
ԱՐ.

ՅԵՐԵՒԱՆԻ

(ՀԱՏԿԱՆՈՒԹԵՐ „ԽՈՐՏԱԿՈՒԽ“ ՎԵՐԻՔ)

2036

Թարգմանեց Ս. Տ.-Ղ.

13203-57

ԽՍՀՄ ՔՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԽՈՍԿՎԱԾ

1931

Սյստեղ հատվածաբար տրված կտորները միայն մի մասն են կազմում Ա. Ֆադեևի «Խորտակում» վեպի: Այս յերկը ըստ իր կառուցվածքի ալեկի շուտ խրոնիկայի, քան վեպ: 1918—1920թ.թ. սարսահանական պատերազմը նկարագրող յերկերի շարքում «Խորտակումը» ամենաառաջին տեղն ե գրավում: Այս գրքում հետաքրքրական այն ե, վոր մասային համեմատաբար քիչ տեղ և արված և ամբողջ ուշադրությունը կենտրոնացրած և առանձին գործող անձանց հոգելանության և նրանց կազմակերպվելու վրա: Հետաքրքրական ե նաև այն, վոր վեպը գրված ե վողջախոն նատուրալիստական տոներով, առանց իդեալիզացիայի, առանց հերոսական ռոմանաժիկայի:

Դիմավոր գործող անձինք՝ Լեինսոնը, Մետելիցան և մյուսները նկարագրված են սովորական, առանց պոզայի, առորյա և ընական կերպով, այսինքն հերոսական ելեմները ստորացված ե, նւեմացրած: Այս հատվածում տրվում ե գործողության, զեկավորության աստիճանական հասունացումը: Հատվածում տրված են լեկինսոնի, հոտաղ Մետելիցայի, պարտիզան Մորոզկայի, ինտելիդնու Մեչեկի բնույթագրերը — վեպի վերջի ամենագեղեցիկ հատվածներից մեկը:

ՄԵՏԵԼԻՑԱՅԻ ՀԵՏԱԽՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մետելիցային հետախորւգման ուղարկելիս, Լեինսոնը նրան հրահանգեց նույն գիշերն և եթ վերագառնալ: Սակայն այն գյուղը, ուր ուղարկված եր Մետելիցան, ավելի հեռու յեր ընկած, քան կարծում եր Լեինսոնը: Մետելիցան զորամասից բաժանվեց ցերեկվա ժամը 4-ի մոտ և բարեխղճորեն քշում եր իր ձին, գիշատիչ թռչնի պես կռանալով, կատաղի ու զվարթորեն լայն բաց արած բարակ պնչերով, կարծես հարբած այդ կատաղի ընթացքից հինգ որվա դանդաղ ու տաղուկալի կացությունից հետո, — սակայն մինչ մթնշաղ նրա յետերից անպակաս վազում եր աշնանային տայգան, — խոտերի շշուկով, մեռնող որվա ցուրտ ու տխուր լույսի տակ: Արդեն բոլորովին մութն եր, յերբ նա գուրս յեկավ, վերջապես, անտառից և սանձանարեց ձիուն մի հին ու փոտած, խարխուլ կտուրով տնակի առաջ, վորտեղից, ինչպէս յերեւում եր, վաղուց հեռացել եյին մարդիկ:

Նա կապեց ձին և, գերանի փխրուն ու փտած ծայրերը ձեռքերով գրկած, բարձրացավ մի անկյուն, իրեն մի մութ ծակի մեջ ընկնելու վտանգին յենթարկելով, մի ծակ, վորտեղից փտած ծառի և խեղդված խոտերի գարշելի հոտ եր փչում: Բարձրացած իր պիրկ, կիսակոր վորտերի վրա, նա կանգնած եր տասը բռպէ անշարժ, աչալուրջ, մութը հետախուրող հայացքով և գիշերը ունկընդրող լսելիքով, ինքը անտեսանելի անտառի մութի ֆոնի վրա, ավելի ևս նման եր գիշատիչ թռչնի: Նրա առաջ փոված եր մի մույլ հովիտ մութ խուրձերով ու պուրակներով, վոր յերկու կողմից շրջապատկած եր մի շաբք մանր բլուրներով, վորոնք խիտ սկիս եյին տալիս աստղալի յերկնքի անհամբույր ֆոնի վրա:

Մետելիցան թռավ թամբին և ճանապարհ ընկավ։ Ճանապարհի սկ, վաղոց ի վեր անցորդ չտեսած գծերը հազիվ նկատելի եյին խոտերի մեջ։ Մթության մեջ բարդիների բարակ բները խաղաղ սպիտակում եյին հանդած մոմերի պես։

Նա բարձրացավ բլուրը։ Զախից առաջվա պես ընթառում եր բլակների սկ ածուն, գալարվելով, ինչպես մի հսկայական գազանի վողնաշար. աղմկում եր գետը։ Մոտ յերկու վերստի վրա, գետի մոտ վառվում եր խարոյշկ, — վոր Մետելիցային հիշեցրեց հովվական կյանքի վորը մենակությունը։ Հեռուն, ճանապարհը կտրելով, ձգվել եյին գյուղի գեղին, անթարթ կրակները, Բլակների գիծը աջից, շեղվելով, կորչում եր կապույտ միգում. այդ ուղղությամբ տարածությունը խիստ ցածացած եր, Յերեկի այդտեղ ե յեղել գետի նախկին հունը, նրա կողքին սկին եր տալիս մռայլ անտառը։

«Անպատճառ այնուեղ ճահիճ կա», — մտածեց Մետելիցան։ Նա մրսում եր. նրա հագին կար բաց զինվորական մի ֆուֆայկա, վորի տակից յերեւում եր դրսի շապիկը՝ կոճակները պոկված ու վիզը բաց։ Նա վճռեց նախ գնալ խարոյշի ուղղությամբ։ Համենայն դեպս նա հանեց դուբուրից ատրճանակը և խրեց գոտիկի յետեր, ֆուֆայկայի տակ, իսկ դուբուրը պահեց թամբի պայուսակի մեջ։ Հրացան չուներ։ Այժմ նա նման եր հանդից վերադարձող դյուղացու։ Գերմանական պատերազմից հետո շատերն եյին այդպես, զինվորական ֆուֆայկաներով, շրջում։

Նա արդեն բոլորովին մոտ եր խարոյշկին, — հանկարծ ձիու անհանգիստ խրխինջը լսվեց մթության մեջ։ Զին առաջ սլացավ և ցնցելով իր կարող մարմինը, ականջները վոլորելով, խրխնջաց — կըքոտ ու մոլոր։ Յեկ նույն վայրէյանին կրակի մոտ յերերաց մի ստվեր։ Մետելիցան ուժեղ մտրակեց ձիուն ու թռավ ձիու հետ միասին…

Խարոյշկի մոտ, վախից աչքերը չուած, ձախ ձեռքին մի մտրակ, իսկ աջը թենոցի հետ միասին բարձրացրած, կարծես պաշտպանվելու համար, կանգնած եր նիհար, սեագլուխ մի տղա — տրիխներով, պատառուտված վարտիկով, յերկար,

հասակին անհամապատասխան, բաճկոնով իրանը փաթաթած, Բաճկոնի վրայից գոտու փոխարեն կապած եր կանեփի թել։ Մետելիցան կատաղի սանձահարեց ձիուն տղայի հենց զեմուղեմ, քիչ եր մնում, վոր տղային տակը գցեր, և ուզում եր արդեն հրամայաբար ու կոպիտ բոռալ նրա վրա, յերբ տեսավ հանկարծ իր առաջ այդ վախեցած աչքերը, ծածանվող թենոցը, վարտիկի տակից սպիտակող մերկ ծնկերը և այն վողորմելի, տիրոջ ուսերից հին բաճկոնը, վորի միջից այնպես մեղավոր ու խղճուկ նայում եր բարակ և ծիծաղելի մանկական վիզը…

— Ի՞նչ ես տնկվել, Վախեցմբր Ե՛հ, ճնճղուկ, ճնճղուկ։ Այ, հիմար! — շփոթված վրա տվեց Մետելիցան այն կոպիտ գգվանքով, վոր մարդկանց հետ խոսելիս բնավ չեր արտահայտում և գործադրում եր միայն ձիաների վերաբերմբ։ — Կանգնել ե ու նայում։ Բա վոր քեզ ձիու տակ գցեյի, տրորեյի… Այ քեզ հիմար! — կրկնեց նա, կակղելով բոլորվին, զգալով, թե ինչպես այդ տղայի և ամրոջ այդ խեղճության հանդեպ իր մեջ արթնանում և հենց այդպիսի վողորմելի, ծիծաղելի և մանկական զգացմունք։

Յերեխան վախից հազիվ շունչ քաշեց և ձեռքը իջեցրեց։

— Իսկ դու ինչու կատաղածի պես վրա պրծար, — ասաց նա, աշխատելով խոսել անկախ ու հանգամանորեն, մեծի պես, թեկ գեռ վստահ չեր. — բա, չես վախենա — եստեղ ձիաներ կան…

— Զիանմբը, — ծաղրելով ասաց Մետելիցան — ասացեք, ինդրեմ։ Նա ձեռքերը դրեց կողերին ու յետ ընկած զիտում եր տղային, աչքերը ձաելով և իր ատլաս, շարժուն ունքերը հազիվ բարձրացնելով։ Հանկարծ ծիծաղեց այնպիսի անկեղծ, այնպիսի բարձր, զվարթ ու բարի յելևեչներով, վոր նույնիսկ ինքը զարմացավ, թե ինչպես կարող են իր ներսից այդպիսի հնչյուններ դուրս թռչել։

Տղան շփոթված, անվստահ, քիթը քաշեց և հասկանալով, վոր յերկյաղալի վոչինչ չկա, այլ ամեն ինչ, ընդհակառակը, շատ ծիծաղելի յե, այնպես ծամածովեց, վոր քիթը վեր թռավ, և նույնպես ծիծաղեց բարակ ու չարաճճի, իսկ մանկական ծիծաղով։ Այս անսպասելի հանգամանքից Մե-

լետիցան փոթկաց ավելի ուժեղ, և նրանք յերկուսով, ակամա իրար գրգռելով, քրքռում եյին այդպես մի քանի ըոպեն մեկը շորորալով թամրի վրազ փայտեցնելով խարույկի լույսից շողացող ատամները, իսկ մյուսը՝ հետույքի վրա ընկած, թաթերը գետնակոխ, և ամեն մի նոր պոռթկումից ամբողջ մարմինը վեր ձգելով:

— Այ ծիծաղացրիր, տղա! — ասաց, վերջապես, Մետելիցան, վոտքն ասպանդակից հանելով: — Ոյինրազն ես, հա: — Նա թուավ թամրից և ձեռքերը՝ յերկարեց զեպի կրակը:

Տղան դադարեց ծիծաղելուց, և նայում եր նրան լուրջ և ուրախ զարմանքով, ասես սպասելով նրանից դեռ ավելի ևս անսպասելի ոյինրազություններ:

— Այ թե ուրախ մարդ ես, սատանա, — արտասանեց նա, վերջապես պարզ ու վորոշ կարծես տալով իր գիտողությունների վերջնական յեղակացությունը:

— Յես, — ծիծաղեց Մետելիցան: — Յես, ախակը, ուրախ մարդ եմ...

— Իսկ յես այնպես վախեցա, — խոստովանեց տղան: — Այստեղ ինձ մոտ ձիաներ կան, իսկ յես կարտոֆիլ եյի խորովում...

— Կարտոֆիլ: Դա շատ լավ ե: — Մետելիցան նստեց նրա կողքին, սանձը ձեռքին պահած: — Այդ վորտեղից ես վերցնում կարտոֆիլը:

— Այ թե վորտեղից... Այստեղ լիքն ե, — և տղան ձեռքով ցույց տվեց չորս բոլորը:

— Ասել ե, գողանում ես:

— Գողանում եմ... Տուր, յես ձին պահեմ... Այդը ե ձիդ... Հա, բաց չեմ թողնի, մի վախենա... Լավ այդը ե, — ասաց տղան, — վորձված հայացքը նետելով հարթ, նիհար, փորը քաշած և մկանուտ ձիու վրա: — Իսկ ինքդ վորտեղից ես:

— Վոչինչ, լավ այդը ե, — համաձայնվեց Մետելիցան:

— Իսկ դու վերտեղից ես:

— Այ, — գլխով արագ տղան յերևացող կրակների կողմը,

— Խանիխեղան ե մեր գյուղը... հարյուր քսան տուն են

— ավելացրեց նա, թքելով:

— Հա... Իսկ յես վորոբյովկայից եմ, սարի յետևից: Գուցե լսած լինեն:

— Վորոբյովկայից, չե, չեմ լսած, հեռու յե, յերկի:

— Հեռու յե:

— Իսկ մեր կողմերն ինչո՞ւ յես յեկել:

— Ինչպես ասեմ... Յերկար պատմելու բան ե... Ուզում եմ ձիաներ գնել, ասում են ձեր կողմերում ձիաներ շատ կան... Յես, ախակը, շատ եմ սիրում ձի, — խորամանկորեն զգացված ասեց Մետելիցան, — ինքս ել ամբողջ կյանքս արածացրել եմ, միայն թե ուրիշի ձիյերը:

— Իսկ յես, կարծում ես, իմ ձիյերն եմ արածացնում: Տեր ունեն...

Տղան թենոցից գուրս հանեց կեղտոտ, նիհար, փոքրիկ ձեռքը և մտրակի կոթով սկսեց փորփորել մոխիքը, վորի տակից գրավիչ ու թեթև գլորվում եյին սև կարտոֆիլները:

— Գուցե ուզում ես տաել — հարցրեց նա: — Յես հաց ել ունեմ, համա քիչ ե...

— Շնորհակալ եմ, նոր եր կերա, այ մինչև եստեղ, — սուտ խոսեց Մետելիցան, ցույց տալով բողազը, և միայն նիմա զգաց, թե վորքան ուտել և ուզում:

Տղան կիսեց կարտոֆիլը, փչեց և կեսը կճեպի հետ բերանը կոխելով, դարձնելով բերանի մեջ սկսեց ախորժան կով ծամել, սուր ականջները շարժելով: Վերջացնելով, նա նայեց Մետելիցային և առաջվա պիս պարզ ու հատու ասեց.

— Վորը եմ յես, արդեն կես տարի յե վորը եմ: Հորս կազակները սպանեցին, իսկ մորս բռնաբարեցին և նույն պիս սպանեցին, և յեղբորս նույնպիս...

Կազակները, — ցնցվեց Մետելիցան:

— Բա սի! Սպանեցին: Յեկ վողջ տունը այրեցին, վոչ միայն մերը, մի տասներկու տուն, և ամեն ամիս գալիս են, հիմա յել քառասուն մարդ կա: Իսկ մեր մոտիկ Բակիտնոյե գյուղում մի ամբողջ գունդ կազակներ կան, ամբողջ ամառը այստեղ են: Են, դաժան են շատ, նը, կարտոֆիլ վերցրու...

— Բա ինչո՞ւ չփախաք: Հրեն՝ ինչ անտառ կա ձեզ մոտ: Մետելիցան մինչև անգամ վոտքի կանգնեց:

— Եհ, անտառը ինչ, Մշտապես անտառում խոմ չես մնա՞
Համ ել այնտեղ ճահիճ ե, դուրս չես պրծնի — այնպիսէ
խոր ճահիճ ե...

— «Ինչ լավ նախագուշակեցի», — մտածեց Մետելիցան,
հիշելով իր յենթագրությունները:

— Գիտես ինչ, — ասաց նա, վոտքի կանդնելով, — ձիս
դու արածացրու, իսկ յես վոտքով կգնամ զյուղի Զեզ մոտ,
այստեղ, ինչպես տեսնում եմ, վոչ թե ձի գնել կթողնեն,
այլ վերջինն ել կթալանեն...

— Ինչու այդպես շուտ: Նստի, — ասաց հովիվը վըդով-
ված և նույնպես վոտքի կանգնեց: — Մենակ տիտոր ե այս-
տեղ, — բացատրեց նա խղճուկ ձայնով, նայելով Մետելի-
ցային խոշոր, աղերսող ու թաց աչքերով:

— Չի կարելի, — ասաց Մետելիցան, — պետք ե հետա-
խուզել, քանի մութն ե... Յես շուտով կվերադառնամ, իսկ
ձին կիապենք: Վորտեղ ե նրանց ամենագլխավորը:

Տղան բացատրեց, թե ինչպես գանել այն խրճիթը, ուր-
քնակվում ե եսկադրոնի պետը, և ինչպես գնալ:

— Իսկ շներ շատ կան:

— Շներ շատ կան, բայց չար չեն:

Մետելիցան կապեց ձին և մնաս բարով ասելով գնաց
գետափի արահետով: Տղան արտում նայում եր նրա յետե-
փից, մինչև վոր նա անհայտացավ մթության մեջ:

Կես ժամից Մետելիցան արդեն զյուղի մոտ եր: Արա-
հետ շեղում եր գեպի աջ, իսկ նա, հովիր խորհրդի համա-
ձայն, շարունակում եր իր ուղին հնձած մարգերով, մինչև
վոր գեմ առավ մի ցանկապատի, վոր շրջապատել եր զյու-
ղացիների բոստանները, իսկ հետո գնաց տների յետեի կող-
մից: Դյուլը արդեն քնած եր, կըակները հանգած եյին:
Աստղերի լույսի տակ հազիվ հազ յերեւմ եյին դատարկ
ու լուռ այգիների միջի խրճիթների հարդե յերթիկները
բոստանների փորած հողի սաւը հոտ եր զալիս:

Մետելիցան յերկու նրբափողոց անցավ և մտավ յերրորդ
նրբափողոց: Շները ուղեկցում եյին նրան խոպոտ, ան-
գլուխան հաջոցով, կարծես վախեցած, սակայն վոչ վոք տնից
դուրս չեկավ, վոչ վոք ձայն չհանեց: Յերեւմ եր, վոր այս-

տեղ սովորել են ամեն ինչի, ընտելացել են այն հանգա-
մանքին, վոր ոտար մարդիկ շրջում են փողոցներում, անում
են այն, ինչ կամենում են: Նույնիսկ չեյին յերեւմ աշնան,
սովորական, յերբ գյուղերում հարսանիքներ են լինում,
շշուկով զրուցող զույգերը. ցանկապատերի թանձը ստվերի
տակ վոչ վոք սիրո մասին չեր շնչում այն աշնան:

Մետելիցան, ինչպես և միշտ վտանգի ըոպեներին, յերբ
արհամարհում ե ամեն ինչ և պատրաստ ե ամեն բանի, ար-
համարհաբար սեղմեց շրթունքները, դիտելով դատարկ նստա-
րանները և զայրանում եր հայտնի չե, թի ում վրա:

Ղեկավարվելով վոքը հովի ցույց տված նշաններով,
նա անցավ մի քանի նրբափողոցներով, միշտ աշխատելով
մնալ յեկեղեցու շուրջը և, վերջապես, դեմ յելավ տերտերի
այգու ներկած պատսելին: (Եսկադրոնի պետը ասլրում եր
տերտերի տանը): Մետելիցան ներս նայեց, աչքերով
պտրտեց, ականջ դրեց, և կասկածելի վոչինչ չգտնելով,
անազմուկ և արագ վոստնեց ցանկապատի վրայից:

Այդին թանձը եր և ճյուղառատ, սակայն տերեները
արգեն թափիլ եյին: Մետելիցան, զպելով սրտի ուժեղ
թրթիռը, համարյա թե առանց շունչ քաշելու, ավելի և ավելի
խորն եր մտնում: Հանկարծ թիկերն ընդհատվեցին ծա-
ռաւդիմով և քսան սաժեն հեռավորության վրա, իրենից գեպի
ձախ, նա տեսավ մի լուսավորված պատուհան: Պատուհանը
բաց եր: Մենյակում մարդիկ կային: Հարթ, մեղմ լույս եր ծո-
րում թափիթված տերեների վրա, իսկ ծայրերից լուսավոր-
ված խնձորենիները կանգնած եյին տարօրինակ և վոսկյա...

— «Ահա» — մտածեց Մետելիցան, ջղաձգորեն ցնցելով
այտը ու վառվելով այն սոսկալի, անվեհեր քաջության ան-
վանելի զգացմունքով, վորը սովորաբար դրդում եր նրան
ամենաանմիտ անձնազնություններ անել: Դեռ մտածելով
այն մասին, թե արդյոք ոգտակար ե լսել այդ լուսավորված
ունյակում նստած մարդկանց խոսակցությունը, նա իրոք
զիտեր, վոր չի հեռանա այստեղից, մինչև իր ցանկությունը
չկատարի: Մի քանի ըոպեյից նա արդեն կանգնած եր խնձո-
րենու յետեւ, պատուհանի տակ և ազահորեն լսում եր ու մըտ-
քում պաշարում այն ամենը, ինչ վոր կատարվում եր այնտեղ:

Նրանք չորս հոգի եյին, նստած սենյակի խորքում սեպանի շուրջը, թուղթ եյին խաղում: Աջից նստած եր փոքրիկ, ծեր տերտերը, հարթած մազերով և աչքերը չորս արած, — նա ճարպիկորեն շարժում եր սեղանի վրա իր նիհար, փոքրիկ ձեռքերը, անաղմուկ անցկացնելով թղթերը իր խաղալիքի նման փոքրիկ մատների միջից և աշխատելով աչքով առնել ամեն մի թուղթ, այնպես վոր նրա հարկանը, վորի մեջքը ուղղակի Մետելիցայի դեմն եր, վերցնելով թուղթը, արագ և վախով աչքի յեր անցկացնում և իսկույն թագնում սեղանի տակ: Յերեսը գեպի Մետելիցան դարձրած նստած եր գեղեցիկ, գեր, ծույլ և, ըստ յերեսոյթին, բարեսիրտ մի ոփիցեր, ծխամորճը ատամների մեջ պահած, — յերեի նրա գերության շնորհիվ Մետելիցան նրան ընդունեց եսկաղոսնի պետի տեղը: Սակայն հետագայում միշտ Մետելիցան, իրեն իսկ անհասկանալի պատճառներով, ավելի հետաքրքրվում եր չորրորդ խաղամոլով, վորի յերեսը փըքված եր ու դժգույն և վորի թերթերունքները անթարթ եյին — նա սե փափախ ուներ զլիսին և յափնջի առանց ուսագիրների, վորը ուսին եր վերցնում ամեն անգամ, յերբ դեն եր շպրտում թուղթը:

Հակառակ Մետելիցայի սպասածին, նրանք խոսում եյին ամենասովորական և անհետաքրքիր բաների մասին: խոսածների համարյա կեսը թղթախաղի շուրջն եր:

— Ութսուն! — ասաց մեջքը Մետելիցային արած նստողը:

— Թույլ ե, ձերդ ազնվություն, թույլ ե, — ասաց սե փափախափորը:

— Հարյուր, — ավելացրեց նա անփոյթ:

Գեղեցիկ և գեր ոփիցերը նայեց, ստուգեց թղթերը և, ծխամորճը բերանից հանելով, բարձրացրեց մինչև հարյուր հինգ:

— Յես փաս, — ասաց առաջինը, դառնալով գեպի տերտերը:

— Յես այդպես ել կարծում եյի... — ծիծաղեց սե փափախափորը...

— Միթե յես մեղավոր եմ, յերբ թուղթը չի գալիս, — արդարանալով ասում եր առաջինը, հայցելով տերտերի կարեկցությունը:

— Քիչ-քիչ, քիչ-քիչ, — ասում եր կատակով տերտերը, աչքերը փակելով և թեթև ծիծաղով, կարծես այդ թեթև ծիծաղով ուղում եր ընդգծել իր խոսակցի խաղի չնչին չափը: — Իսկ յերկու հարյուր յերկու աչքը արդեն ջնջեցիք... ճանաչում եմ ձեզ!... — և նա իր կեղծ-գգվալից խորամանկությամբ մատը սպասնալով թոթափեց:

— Այ վոջի! — մտածեց Մետելիցան:

— Ախ, դուք ել փաս, — հարցրեց տերտերը ծույլ ոփիցերին, — համեցեք, — դարձավ նա սե փափախավորին և առանց թղթերը բաց անելու տվեց նրան:

Մի բոպե նրանք կատաղաբար սեղանին եյին շպրտում թղթերը, մինչև վոր սե փափախավորը տարվեց. — «Հը, պարձենում եյիր, դմբո», — արհամարհաբար մտածեց Մետելիցան, և չգիտեր զնա արդյոք, թե մնա այստեղ ելի: Բայց նա չկարողացավ հեռանալ քանի վոր տարվածը յերեսը դարձրեց զեպի պատռհանը, և Մետելիցան զգաց իր վրա ուղղված թափանցող հայացքը, վոր ասես սառել եր սոսկալի անթարթ անվրիպության մեջ:

Այդ միջոցին մեջքը պատռհանի կողմը դարձրած խաղացողը սկսեց խառնել թղթերը, նա խառնում եր բարեխղճորեն և տնտեսաբար, այնպես, ինչպես աղոթում են դեռ տակավին առույգ պառավելը:

— Իսկ նեչիտայլոն չկա, — հորանջելով ասաց ծույլը. — Եերեկի հաջող ե նրա գործը: Իղուր նրա հետ չգնացի...

— Յերկուսով. — հարցրեց փափախավորը, յերեսը պատռհանից դարձնելով: — Նա յոլա կտաներ, — ավելացրեց հետո զեմքի անհաճո ծամածությամբ:

— Վասենկան, — հարցրեց տերտերը. — ո - ո... նա յոլա կտաներ... Մենք այստեղ մի ջանավար սաղմոսասաց ունեյինք — հա, այդ մասին ախր պատմել եմ ձեզ... Միայն թե Սերգեյ իվանիչը չեր համաձայնվի... Յերբեք... Գիտեք, ինչ ասեց նա յերեկ ինձ գաղտնիքով: — «Յես, — ասում ե, — նրան հետս պիտի տանեմ, յես, — ասում ե, — չեմ վախենում նույնիսկ նրա հետ ամուսնանալ, յես — ասում ե... Ախ! — հանկարծ բացականչեց տերտերը, խորամանկորեն փայլեցնելով իր փոքրիկ խելացի աչքերը: — Ինչ վատ հի-

շողություն ունեմ յես: Զեյի ուզում դադանիքը ասել ու դուրս տվի: Բայց, հա, գաղտնիք մնա: — Յեվ նա շինծու. վախով թափահարեց ձեռքերը: Յեվ թեև բոլորը, Մետելիցայի պես, տեսնում եյին նրա ամեն մի խոսքի և շարժումի կեղծությունն ու ծածկված հաճոյականությունը, սակայն վոչ վոք նրան չասեց վոչինչ այդ մասին և բոլորը ծիծաղեցին:

Մետելիցան, կռանալով և կողքի շարժվելով, հեռացավ պատուհանից: Նա նոր եր շեղում ծառուղուց, յերբ դեմ ու դեմ յելավ կազմի շինելը մի ուսին առած մարդու, — նրա յետևից յերևում եյին յերկու մարդ:

— Դու այստեղ ի՞նչ ես անում, — դարձացած հարցրեց այդ մարդը և անդիտակցաբար բռնեց շինելը, վոր քիչ եր մնում ցած ընկնի:

Մետելիցան յետ թռավ և փախավ դեպի թիերը:

— Կանգնիր! Բռնեցեք դրան! Բռնեցիք! Այստեղ! Եյ! — աղաղակեցին մի քանի ձայն: Կարուկ և ընդհատ պայթյուններ ճարճատեցին նրա յետեից:

Մետելիցան, մոլորված թիերի մեջ, գլխարկը կորցրած, վազում եր «յա բախտի», բայց ձայները գոչում եյին, վոռնում արդեն նրա առաջ և չարագուշ շների հաջոցն եր լսվում փողոցից:

— Ահա նա, բռնիր! — բղավեց մեկը, հարձակվելով Մետելիցայի վրա ու ձեռքը յերկարելով: Գնդակը վզզաց՝ Մետելիցայի ականջի մոտ: Մետելիցան ել կրակեց: Նրա վրա հարձակվող մարդը սայթաքեց ու ընկավ:

— Իզուր ե! չես բռնի... — ասաց հպարտորեն Մետելիցան, վոր մինչև վերջին բոպեն իրոք չեր հավատում, թե իրան կարող են բռնել:

Բայց մեկը ուժեղ ու ծանր վրա ընկավ նրա յետեից և ձնշեց նրան իր ծանրությամբ: Մետելիցան փորձեց իր ձեռքն ազատել, բայց դաժան հարվածը, վոր իջավ գլխին, նրան խլացրեց:

Հետո նրան ծեծում եյին անընդհատ, և նա նույնիսկ ուշաթափ վիճակում դեռ զգում ել նրանց հարվածները ելի ու ելի...

Ստորոտում, ուր քնած եր զորամասը, մութ եր և խոսավ, բայց Խառնիխեճայի նարնջագույն բացատից արդեն յերեսում եր արեց, և աշնան մահաշունչ որը արդեն բարձրանում եր անտառի վրա:

Որապահը, վոր նիրհած եր ձիյերի մոտ, քնի միջից լսեց վճռական և միալար հնչյունը, վոր նման եր հեռու գնդացիրային զարկի ձայնին, վախեցած վեր թռավ ու ձեռքն առավ հրացանը: Բայց դա փայտափորն եր թրխկացնում վաղեմի լաստենի ծառի վրա, գետի մոտ, — որապահը հայեցից, և ցրտից կուչ զարով ու փաթաթվերով ծակծկված շինելով, մոտեցավ բացատին: Բացի նրանից վոչ վոք չարթնացավ մարդիկ քնած եյին խուլ, անդեմ և անհույս քնով, ինչպես քնում են սոված, չաղքաշ մարդիկ, վորոնց նոր բացվող որը վոչինչ չի խոստանում:

«Իսկ Մետելիցան դեռ չկա... լկել ե, յերեի, և շնթռկել ե մի վորեե խրճիթում, իսկ մենք այստեղ քաղցած նստել ենք», — մտածեց որապահը: Սովորաբար նա ուրիշներից վոչ պակաս հիանում եր և հպարտանում Մետելիցայով, բայց այժմ նրան թվում եր, վոր Մետելիցան բավականին ստոր մարդ ե և զուր են նրան վաշտի հրամանատար նշանակել: Որապահը հանկարծ ցանկություն զգաց այստեղ, տայգայում չտանջվելու, այն ժամանակ, յերբ ուրիշները, ինչպես, որինակ, Մետելիցան, վայելում են աշխարհի բոլոր վայելքները, բայց չվաստահացավ Լեինսոնին անհանգստացնել առանց բավականաչափ հիմունքի և արթնացրեց Բականուիին:

— Ի՞նչ ե. դեռ չի յեկել... — շուռ յեկավ Բակլանովը, չոելով քնիատ, վոչինչ չհասկացող աչքերը: — Ինչպես թե չի վերադարձել. — բղավեց նա հանկարծ, դեռ խելքը գլուխը չեկած, և արդեն հասկանալով, թե ինչի մասին ե խոսքը. և վախեցած, ասեց: — Զե, յեղբայր, վաղ արի, այդ անկարելի յե... Ալ, հա, Դե ձեն տուր Լեինսոնին: — Նա վեր թռավ, արագ շարժումով ձգեց գոտին, և բնեռելով քթի վրա քնիատ աչքերը, հանկարծ ամբողջովին կարծրացավ և լռեց:

Լեինսոնը, թեև շատ խոր քնի մեջ եր, բայց լսելով իր ազգանունը, իսկույն բացեց աչքերը ու նստեց: Նայեց

որապահին և Բակլանովին ու հասկացավ, վոր Մետելիցան չի վերադաբել և արդեն ժամանակ և արշավելու, Առաջին պահին նա իրան այնքան հոգնած ու ջախջախված զգաց, վոր ցանկություն զգաց փաթաթվել շինելի մեջ ու նորից քնել մոռանալով և՛ Մետելիցայի, և՛ իր ցավերի մասին: Բայց նույն ըովելին նա արդեն կանգնած եր ծնկաչող, կուլութում եր շինելը և Բակլանովի անհանգիստ հարցերին պատասխանում եր չոր ու անտարբեր տոնով:

— Ի՞նչ ե վոր... Յես հենց այդպես ել կարծում եյի... Ի հարկե մենք նրան կհանդիպենք ճանապարհին:

— Իսկ յեթե չհանդիպե՞նք:

— Յեթե չհանդիպե՞նք... Լսիր, շինելը կապելու ավելորդ դայթան չունեմ:

— Վեր կաց, վեր կաց, յարու: — Բոռում եր որապահը, վոտքերով հրելով քնածներին Խոտերի միջև բարձրանում եյին պարտիզանների խոնված մազերով գլուխները և որապահի յետևից թոշում եյին առաջին, քնաթաթախ ու անավարտ հիշոցները — լավ տրամադրության ժամանակ այդ հայհոյանքները Դուքովը անվանում եր «առավոտյան»:

— Զարացած են բոլորը, — մտախոհ ասեց Բակլանովը, — ուտել են ուզում...

— Իսկ դժւ, — հարցը Լինսոնը:

— Յես, ինչ ի՞նչ... Իմ մասին խոսք չկա. — Բակլանովը նոթերը կիտեց: — Ինչպես դու, այնպես ել յես, իբր թե չգիտես...

— Պոչ, յես գիտեմ, — ասաց Լինսոնը այնպիսի մեղմ ու խոնարհ արտահայտությամբ, վոր Բակլանովը կյանքում առաջին անգամ ուշադրությամբ սկսեց գիտել նրան:

— Իսկ դու, յեղբայր, նիհարել ես, — ասաց նա անսպասելի ցավակցությամբ: — Միայն միրուքդ ե յերեւում... Յեթե յես քո տեղը լինելի...

— Ավելի լավ կլինի, վոր գնանք լվացվելու, — ընդհատեց նրան Լինսոնը, մեղավոր ու մույլ ժպտալով:

Նրանք շարժվեցին դեպի գետը, Բակլանովը հանեց վրայի յերկու շապիկը ու շաղ եր տալիս մարմինը ջղով: Ենթակառ եր, վոր նա սառը ջրից չի ցախէնդում: Նրա մազ-

մինը կարծը եր, քիփ, թուխ և կարծես ձուլված, իսկ գլուխը կլոր ու բարի, մանկան գլխի պես, և լվացվում եր նա նույնպես ինչ վոր մանկական շարժ ու ձևով — ջուրը առնում եր ափի մեջ և մարմինը տրորում մի ձեռքով:

«Այս ինչի՞ մասին եր, վոր յես յերկար խոսում եյի յերեկ և ինչ վոր խոստացա, իսկ այժմ անհարմար ե թվում — մտածեց հանկարծ Լինսոնը, աղոտ կերպով և թշնամաբար հիշելով իր յերեկվա խոսակցությունը Մեշիկի հետ, և իր մտքերը, վոր կապ ունեյին այդ զրույցի հետ: Յեկ վոչ թե այդ մտքերն եյին այժմ թվում նրան սխալ, այսինքն արտահայտում եյին վոչ այն բոլորը, ինչ վոր իրոք կատարվում եր իր մեջ — վոչ, նա զգում եր, վոր այդ մըտքերը բավականին ճիշտ, իսելացի և հետաքրքրական մտքեր եյին, բայց և այնպես, այժմ վերհիշելով իր մտքերը, նա ինչ վոր անորոշ դժգոհություն եր զգում: «Հա, յես նրան խոստացա ուրիշ ձի տալ... Բայց միթե դա մի անհարմար բան եւ Վոչ, յես այդպես կվարվեյի և այսոր, ասել ե, ամեն ինչ իր տեղն ե... Բա, ինչո՞ւմն ե բանը... Իսկ բանը նրանումն եած:

— Ինչի՞ չես լվացվում, — հարցը Բակլանովը, լվացվելուց ու իր մարմինը կեղտոտ սրբիչով մինչև կարմրելը տրորելուց հետո: — Զուրը սառն ե! Լավ!

... «Իսկ բանը նրանումն ե, վոր յես հիվանդ եմ և որորի ավելի վատ եմ ինձ տիրապետում» — մտածեց Լինսոնը մտածնալով ջրին:

Յերբ լվացվեց, կապեց գոտին ու զգաց կողքի վրա մառզերի սովորական ծանրությունը, նա զգաց, վոր գիշերվա ընթացքում մի քիչ հանգստացել եւ:

«Ի՞նչ պատահեց Մետելիցային»: Այս միտքն եր այժմ ամբողջապես տիրել նրան:

Լինսոնը վոչ մի կերպ չեր կարող պատկերել իրեն Մետելիցային առանց շարժման և առհասարակ անկինդան: Նա դեպի այդ մարդը միշտ զգում եր աղոտ մի հակում, և անգամ նկատել եր, վոր իրեն շատ զյուրալի յե նրա հետ կողք-կողքի գնալ ձի հեծած, խոսելով նրա հետ, կամ ուղղակի նայելով նրան: Մետելիցան դուր եր գալիս նրան

վոչ թե իր վորնե աչքի ընկնող հասարակական-ոգտակար հատկություններով, վորոնց շատ քիչ պաշար ուներ, և վոր ավելի մեծ չափով հատուկ եյին իրեն՝ լեինսոնին, այլ այն Փիզիքական արտասովոր կարծրությամբ, կենդանական, կենսական այն ուժով, վորով այնքան առատ ոժտված եր Մետելիցան և վոր այնքան պակասում եր իրեն՝ լեինսոնին։ Յերբ նա տեսնում եր իր մոտ նրա արագաշարժ, գործելու պատրաստ մարմինը և կամ գիտեր, վոր Մետելիցան ուր-վոր այստեղ ե, իր կողքին, նա մոռանտմ եր իր սեփական Փիզիքական անկարությունը և նրան թվում եր, վոր ինքն ել կարող և լինել ամուր և անդուր, ինչպես Մետելիցան։ Իսկ ներքուստ հապարտանում եր նույնիսկ, վոր զեկավարում և Մետելիցայի պես մարդու։

Այն միտքը, թե Մետելիցան կարող եր ընկնել թշնամու ձեռքը, վորը ավելի և ավելի յեր հաստատվում լեինսոնի մեջ, — դժվար եր պատվաստվում մարդկանց։ Ամեն մի հոգնած պարտիզան տոկունությամբ և անով հեռացնում եր իրանից այդ միտքը, իբրև ամենավերջին միտք, վոր գուժում եր նրան միայն դժբախտություն ու տառապանք, և դրա համար ել, յերեի, նրան այդ թվում եր անհնարին։ Յեվ ընհակառակը, որապահի այն յենթադրությունը, վոր «կել և ու շնթոկել մի վորնե խրճիթում», — չնայած այն հանգամանքին, վոր բնավ չեր սազում արագաշարժ ու զործունյա Մետելիցային, — ավելի շատ կողմանկիցներ եր հավաքում։ Շատերը բացարձակապես տրտնջում եյին Մետելիցայի ռստորության և անդիտակցության» առթիվ և ձանձրացնում եյին լեինսոնին իրենց նրան ընդունածելու պահանջներով։ Յեվ յերբ լեինսոնը հատուկ մանրակրկիտությամբ կատարեց իր բոլոր առողյա գործերը, մասնավորապես փոխեց Մեչկի ձին, վերջապես հրաման տվեց արշավելու, — զորամասում այնպիսի մի ուրախություն սկսվեց, կարծես այդ հրամանի հետ միաժամանակ իրոք վերջացան բոլոր դժբախտությունները։

Նրանք գնում եյին արդեն մի, յերկու ժամ, իսկ Մետելիցան իր լոթի ու փայլուն քանքյունով չեր յերկում ճանապարհի վրա, նրանք անցան ևս այնքան, ինչքան անցել

եյին, սակայն Մետելիցան չկար։ Յեվ արդեն վոչ միայն լեինսոնը, այլև ամենածայրահեղ նախանձողներն ու Մետելիցայի զրպարտիչները սկսեցին կասկածել նրա ուղևորության յերջանիկ վախճանի մասին։

Անտառի յեղին ջոկատը մոտենում եր դաժան ու խոր լուրթյամբ։

II. ՅԵՐԵՎԱՆ ՄԱԿԱՐ

Մետելիցան ուշքի յեկավ ընդարձակ ու մութ մի մարագում, — նա պառկած եր չոր ու խոնավ գետնի վրա, և առաջին զգացմունքը, վոր նրան տիրեց — դա սառը հողի ցուրտ, ամբողջ մարմինը թափանցող խոնավության զգացմունքն եր։ Նա միանգամից հիշեց այն բոլորը, ինչ վոր կատարվել եր։ Իրեն դիպած հարվածները դեռ արձագանքում եյին նրա գլխում, մագերի վրա չորացել եր արյունը, — նա զգում եր այդ չորացած արյունը ճակատի և այտերի վրա։

Առաջին քիչ թե շատ ձևակերպված միտքը, վոր առաջացավ նրա մեջ, այն եր — Յեվ չի կարելի, արդյոք, հեռանալ այստեղից։ Մետելիցան չեր ուղում հավատալ վոր այն բոլորից հետո, վոր ինքը տեսել և կյանքում, բոլոր իր քաջություններից և հաջողություններից հետո, վոր միշտ ուղեկցել են նրան և փառավորել նրա անունը մարդկանց մեջ, — ինքը, վերջիվերջո, պիտի մնա պառկած փթելու, ինչպես յուրաքանչյուրը այդ մարդկանցից։ Նա տնտղեց ամբողջ մարագը, շոշափեց բոլոր ճեղքերը, փորձեց նույնիսկ դուռը կոտրել — իզուր ջանք!... Ամենուրեք նա հանդիպում եր մեղյալ սառը տախտակեղենին, իսկ ճեղքերը այնքան անհուսավորեն նեղ եյին, վոր նրանց մեջ չեր թափանցում նույնիսկ հայացքը, — այնտեղից հազիվ անցնում եր աշնան առավոտի աղոտ լույսը։

Սակայն նա տնտղում եր ելի ու ելի, մինչև վոր գիտակցեց անողորմ ու անել ճշտությամբ, վոր այս անգամ իրոք չի կարող փախչել։ Յեվ յերբ նա վերջնականապես համոզվեց այդ գիտակցության մեջ, իր սեփական կյանքի ու մահվան հարցը դադարեց նրան հետաքրքրել։

Նրա վողջ հոգեկան ու ֆիզիկական ուժերը այժմ կենարունացան այն — իր սեփական կյանքի ու մահվան տևակետից միանդամայն աննշան, բայց այժմ իր համար ամենակարևոր նշանակություն ունեցող, — հարցի վրա, թե ինչ կերպ ինքը՝ Մետելիցան, վորը մինչև որս միայն հերոսի ու կարիճի համբավ եւ ունեցել պետք եւ ցույց տա այն մարդկանց, վորոնք սպանելու յեն իրեն, վոր ինքը չի վախենում նրանցից, արհամարհում և նրանց:

Նա զեռ այս բոլորի մասին չեր մտածել ինչպես հարկն ե, յերբ դռան յետեից ձայներ լսվեցին, փականքը աղմկեց և առավոտյան գորշ, յերեր ու նիհար լույսի հետ մարագը մտան յերկու նիհար, տրորած, սակայն զինված, լամպառավոր կազակ, Մետելիցան վոտքերը ձգած, նայում եր նրանց, աչքերը ճթելով.

Նկատելով Մետելիցային, նրանք անվճռականորեն շորովցին դռան մոտ, և նա, վոր դռան մոտ եր, անհանգիստ կերպով քիթը քաշեց:

— Վեր կաց, գնանք, հայրենակից, — ասեց, վերջապես, առաջինը անչար, նույնիսկ քիչ մեղավոր ձայնով:

Մետելիցան, համառորեն գլուխը թեքած, դուրս յեկավ, Քիչ հետո նա կանգնած եր իրեն ծանոթ մարդու առաջ — սև փափախավոր ու յափնջավոր, — այն իսկ սենյակում, վորը դիտում եր գիշերը տերտերի այգուց, Այստեղ բազկաթոռին փուլած, զարմանքով և վոչ խիստ նայելով Մետելիցային, նստած եր գեղեցիկ, գեր ու բարեսիրտ ոփիցերը, վորին յերեկ Մետելիցան հսկադրոնի պետի տեղ ընդունեց: Այժմ լավ դիտելով յերկուսին ել Մետելիցան հասկացավ, վոր պետը վոչ թե այդ բարեսիրտ ոփիցերն ե, այլ մյուսը՝ յափնջավորը:

— Կարող եք հեռանած — ընդհատ կերպով արտասանեց մյուս ոփիցերը, դառնալով դռան մոտ կանգնած կազակներին:

Նրանք անշնորքաբար իրար հրելով դուրս յեկան սենյակից:

— Ի՞նչ եյիր անում յերեկ այգում, — արագ հարց տվեց նա, կանգ առնելով Մետելիցայի առաջ և նայելով. նրան շեշտակի, անթարթ հայացքով:

Մետելիցան լուռ, ծաղրական ժպիտով նայում եր նրան, հանդուրժելով նրա հայացքը, հազիվ յերերելով իր ատլաս սե ունքերը և իր ամբողջ տեսքով ցույց տալով, վոր, անկախ նրանից, թե ինչ հարցեր կտան իրան և ինչ կերպ կտիպեն պատասխանել, նա չի տա այնպիսի պատասխան, վորը բավարարի հարցնողին:

— Դու այդ հիմարությունները թող, — նորից ասեց պետը առանց չարանալու և ձայնը բարձրացնելու, բայց այնպիսի տոնով, վորը ցույց եր տալիս, վոր նա հասկանում ե այն ամենը, ինչ վոր կատարվում ե այժմ Մետելիցայի մեջ:

— Ի՞նչ կարիք իգուր խոսելու, — ներողամտաբար ասաց Մետելիցան:

Եսկաղընի պետը մի քանի վայրկյան ուսումնասիրում եր նրա սառած, չեչոտ, չորացած արյունով ներկված դեմքը:

— Ծաղիկով վաղմուց եյիր հիվանդ, — անսպասելիորեն հարցըց նա:

— Ի՞նչ — մեկից գլխի չընկնելով, ասաց Մետելիցան: Նա զլխի չընկավ, վորովհետեւ պետի այդ հարցի մեջ վոչ ծաղրի և վոչ ծիծաղի նշույլ չեր զգացվում, այլ յերեսում եր, վոր նա բացարձակապես հետաքրքրվում ե նրա չեչոտ դեմքով: Սակայն այդ հասկանալով Մետելիցան ավելի զազագեց, քան յեթե իրոք ծաղրեյին իրեն:

— Հը, դու այստեղմացի յես, թե ուրիշ տեղից ես յեկել:

— Վազն արի, ձերդ աղնավություն!... — վճռականորեն ու ցասումով ասաց Մետելիցան, սեղմելով բռունցքները ու կարմրած, հազիվ իրեն զսպելով նրա վրա հարձակվելու ցանկությունից: Նա ուզում եր ելի ինչ վոր ասել, բայց մի միտք, թե ինչու իրոք այժմ չըռնել այդ սև մարդուն այդպիսի գարշելի — անդորր, փքված յերեսով, այդպիսի անկարգ ու վողորմելի շեկ մորուսով, ու խեղեկ, — այդ միտքը հանկարծ այնպիսի ուժով տիրեց նրան, վոր նա խոսքը բերանը մնաց, մի քայլ առաջ անցավ, ձեռքերը ցնցվեցին և չեչոտ դեմքը մեկից քրտնեց:

— Ոհո! — առաջին անգամ զարմացած ու բարձր բացականչեց այդ մարդը, սակայն առանց մի քայլ անզամ նաևնշելու և հայացքը միշտ Մետելիցային ուղղած:

Մետելիցան անվստահ կանգ առավ, փայլեցնելով բիբրը. Այս ժամանակ այդ մարդը հանեց պատյանից ատըրձանակը և ճոճացրեց Մետելիցայի քթի առաջ: Մետելիցան տիրապետեց իրեն և, յերեսը դարձրած դեպի պատուհանը, քարացավ արհամարհական լուռթյան մեջ:

Այնուհետև, չնայած ատրճանակով սպառնալիքներին, հետագայի ամենադաժան պատժի սպառնալիքներին և պաղտանքներին՝ ճշտիվ պատմել ամեն ինչ — բացարձակ ազատություն ստանալու պայմանով, — նա վոչ մի խոսք չարտասանեց և նույնիսկ վոչ մի անդամ չնայեց հարցնողներին:

Հարցաքննության ամենատաք ժամանակ թեթև բացվեց գուուը և մի ինչ վոր մազու գլուխ — խոշոր, վախեցած ու հիմար աչքերով ներս ցցվեց:

— Ըստ, — ասաց եսկաղոնի պետը. — արդեն հավաքվել են. — Ես, ասա աղերանց, վոր գուրս տանեն ես զոչաղին:

Նույն յերկու կազակը դուրս տարան Մետելիցային դեպի բակը, և ցույց տալով ցանկապատի բաց գուուը, հետեւ վեցին նրան: Մետելիցան թեև յետ չեր նայում, բայց զգում եր, վոր այն յերկու ոփիցերներն ել գալիս են իր հետից: Այնտեղ, յերեցփոխանի գերանաշեն խրճիթի մոտ, խմբվել եր չորս կողմից ձիավոր կազակներով շրջապատված ամբոխը:

Մետելիցային միշտ թվում եր, վոր ինքը չի սիրում և արհամարհում ե մարդկանց, նրանց ախուր ու տաղտուկ կենցաղը և ամեն ինչ, վոր շրջապատում ե նրանց: Նա կարծում եր, վոր իր համար միանդամայն միւնույն ե, թե ինչպես են մարդիկ իրեն վերաբերվում և թե ինչ են ասում իր մասին. Նա յերբեք բարեկամներ չեր ունեցել և աշխատում եր չունենալ բարեկամներ: Բայց դրա հետ միաժամանակ այն բոլոր մեծ ու կարևոր գործերը, վոր նա արել եր իր կյանքում, ինքն ել այդ չնկատելով անում եր մարդկանց համար, վորպեսզի մարդիկ նայեցին նրա վրա, պարծենացին և հիանացին նրանով, և փառավորեցին նրան: Ցեղ այժմ, յերբ նա բարձրացրեց իր գլուխը, հանկարծ վոչ միայն հայացքով, այլև իր ամբողջ սրտով ընդգրկեց մուժիկ-

ների, տղաների, վախեցած կանանց, սովորակ դունավոր գլխակապերով աղջկերանց, կայտառ, քանքյուլավոր ձիավորների այդ յերերացող, խառնիճաղանչ ու խաղաղ ամբոխը:

«Այ, սա հասկանում եմ» — քիչ մնաց վոր բացականչի նա, ամբողջապես բացվելով և ուրախանալով այն ամենին — կենդանի, վառ ու խեղճ, վոր շարժվում եր, շնչում եր և լուսավորում նրա շուրջը և թրթռում իր մեջ: Ցեղ նա ավելի արագ ու ազատ առաջ քայլեց գաղանի թեթև, գետնին չկպչող քայլվածքով, յերերելով իր ճկուն մարմինը. հրապարակի վրա գտնվողներից ամեն մեկը դարձնում եր իր հայացքը դեպի նա ու զգում, շունչը պահած, թե ինչպիսի գաղանացին ու թեթև, ահա այս քայլվածքի պես, ուժ ե ապրում նրա ճկուն և ագահ մարմին մեջ:

Նա անցավ ամբոխի միջից, նայելով վերևից նրա վրա, բայց զգալով ամբոխի լուս կենալունացած ուշագրությունը, և կանգ առաջ յերեցփոխանի խրճիթի դուն առաջ:

— Այստեղ, այստեղ, — ասաց եսկաղոնի պետը, ցոյց ատլով տեղը իր կողքին: Մետելիցան մեկից շեքից աստիճանները և կանգնեց նրա կողքին:

Այժմ նա յերեսում եր բոլորին, — ձիգ ու վայելչակաղմ, սկսիեր, փափուկ, մարալի մազից կողիկներ հագին, վրայի շապիկը վզաբաց և գոտու փոխարեն բարակ դայթան կապած, վորի ծայրերը վերջանում եյին կանաչ, թանձր փունկուլներով, — իր թաշող աչքերի հեռու գիշատիչ փայլով, վոր նայում եյին այն կողմ, ուր գորշ առավոտյան ծիփ մեջ քարացել եյին լեռների փառահեղ գագաթները:

— Ո՞վ ե ճանաչում այս մարդուն, — հարցրեց պետը, շրջահայելով բոլորը իր ծակող հայացքով, վայրկենաբար կանգ առնելու այս կամ այն գեմքի վրա:

Ցեղ ամեն մեկը, վորի վրա կանգ երանուում այդ հայացքը, անհանգիստ ու թարթելով կախում եր գլուխը, — միայն կանայք, անզոր լինելով հեռացնել աչքերը, նայում եյին նրան համը ու բութ, վախկոտ ու ագահ հետաքրքրությամբ:

— Վոչ վոք չի ճանաչում, — հարցրեց նորից պետը, ծաղրով ընդգծելով «վոչ վոք» խոսքը, կարծես թե իրեն

պարզ եր, վոր բոլորը, ընդհակառակը, ճանաչում են, կամ պետք ե ճանաչեն «այդ մարդուն»... — Այդ մենք այժմ կպարզենք... Նեշիտայլո! բոռաց նա, ձեռքը շարժելով այն ուղղությամբ, ուր ձի խաղացնելով սլանում եր բարձրահասակ մի ոփիցեր, կազակի յերկար շինելը հագին:

Ամբոխը անազմուկ ալեկոծվեց, — առաջին շարքերում կանգնողները յետ նայեցին — մեկը ու ժիլետ հագին վճռականորեն յետ մղելով ամբոխը առաջ եր շարժվում, գլուխը թեքած այնպես, վոր միայն յերկում եր նրա տաք մորթու գլխարկը:

— Թողեք անցնեմ, թողեք անցնեմ! — ասում եր նա արագ-արագ, ճանապարհ բաց անելով մի ձեռքով, իսկ մյուս ձեռքով քաշում եր ինչ վոր մեկին իր յետեից:

Վերջապես նա հասավ մինչև դուռը, և պարզվեց, վոր հետը բերել ե մի նիհար, սևագլուխ, յերկար բաճկոն հագած տղայի, վորը վախեցած համառում եր և չոռում իր ու աչքերը մերթ Մետելիցայի և մերթ պետի վրա: Ամբոխը ավելի աղմկալի ալեկոծվեց, լսվեցին հառաջներ և զսպված կանացի զրույց: Մետելիցան ցած նայեց և հանկարծ այդ օնակդուխ մանկան ճանաչեց՝ դա այն փոքրիկ հովիթը եր — վախեցած աչքերով, բարակ ծիծաղելի ու մանկական վզով, — վորին ինքը յերեկ հանձնեց իր ձին:

Տղայի ձեռքը բռնած գյուղացին հանեց գլխարկը, բաց անելով շեկ ձմլված գլուխը բժավոր ալհեր մազերով (թվում եր թե անհավասար կերպով աղ եր ցանած նրա գլխին), և գլուխ տալով պետին, ուղում եր սկսել —

— Այ, նա իմ հովիթը ե...

Բայց, ըստ յերկույթին, վախենալով, վոր իրան չեն լսի, կուացավ դեպի տղան ու, մատով ցույց տալով Մետելիցային, հարցրեց՝

— Հը, սա յե:

Մի քանի բոպե շարունակ փոքրիկ հովիթը ու Մետելիցան նայում եյին իրար՝ Մետելիցան շինծու սառնասրտությամբ, հովիվը — ահով, կարեկցությամբ ու խղճահարված: Ապա տղան հայցքը դարձրեց եսկաղընի պետի վրա, մի վայրկյան կանգ առավ, ասես փետացած, հետո — նայեց գյուղացուն, վորը բռնել

եր նրա ձեռքը և սպասողաբար թեքվել եր դեպի նա, — հառաչեց խորն ու դժվար և բացասաբար թափահարեց գլուխը: Ամբոխը, վոր այնքան եր լուռ, վոր լսվում եր յերեցփոխի հորթի շարժումը վանդակում, թեթև յերերաց ու նորից լոեց:

— Հը, դու մի վախենա, սարսաղ, մի վախենա, — գգվալի, գողացող ձայնով համոզում եր դյուղացին, վոր ինքն ել շփոթվել եր, ու մատով Մետելիցային ցույց տալով, ասում եր. — բա, ով ե այն ժամանակ, յեթե վոչ սա»... Դե, խոստովանիր, խոստովանիր, մի վա...ա...ա, — գարշելի, չարացած ընդհատեց նա հանկարծ և ամբողջ ուժով ցնցեց տղայի ձեռքը: — Այո, սա յե, ձերդ ազնվություն, ով պիտի լինի, բացի սրանից, — խոսեց նա բարձր, կարծես արդարանալով և ստորաբար տրորելով գլխարկը — Միայն վախենում ե տղան, բայց ել ով պիտի լինի, յերբ ձին թամբած ե ու զուբուրն ել պայուսակում ե: Յերեկոյան յեկել ե կրակի վրա: «Արածացրու», — ասում ե, — իմ ձիուն» — իսկ ինքը բռնել ե գյուղի ճամբեն, — տղան չի սպասել — արդեն լուսացել ե — չի սպասել — ու ձին քշեց բերեց, իսկ ձին թամբած ե և զուբուրը պայուսակի մեջ, — ել ով կարող ելինել...

— Ո՞վ ե յեկել ինչ զուբուր: — հարցրեց պետը, իզուր ջանալով հասկանալ, թե ինչի մասին ե խոսքը: Գյուղացին, ավելի այլայլված, շարժեց գլխարկը և, նորից շփոթելով, պատմեց այն մասին, թե ինչպես իր հովիթը առավատյան քշել-բերել ե մի ուրիշի ձի, իսկ ձին թամբած ե, և պայուսակի մեջ ատրճանակի զուբուր կա:

— Ահա թե ինչ! — յերկարելով ասեց եսկաղընի պետը: Բայց չե վոր սա չի ճանաչում, — ասեց նա, ցույց տալով տղային: — Ասենք, տուր ինձ տղային — մենք սրան կքննենք մեր զայդի:

Տղան, վորին յետեկց հրում եր գյուղացին, մոտեցավ դռանը, չվստահանալով, սակայն, բարձրանալ: Ոֆիցերը ցած վազեց աստիճաններից, բռնեց տղայի նիհար ցնցվող ուսերից ե, քաշելով դեպի ինքը, սուզեց իր ծակող ու սարսափելի աչքերը նրա ահից կլոր աչքերի մեջ:

— Ա. . . ա!.. — հանկարծ բոռաց մանուկը, վոլորելով աչքի սպիտակուցները:

— Վերջը ինչ պիտի լիսի! — հառաչեց, չհանդուրժելով,
կանանցից մեկը:

Այդ միևնույն վայրկյանին մի ինչ վոր արագաշարժ ու
ձկուն մարմին թռավ աստիճաններից: Ամբոխը յետ մղվեց,
թափահարելով բազմաձեռք իրանով, — եսկադրոնի պետը
ընկավ ուժեղ հարվածից...

— Կրակեցեք սրա վրա!.. Այս ինչ բան ե. — բոռաց գե-
ղեցիկ ոֆիշերը, անձարի պես գեմ արած իր ափը, և հիմա-
րացած ու մոռացած, վոր ինքն ել գիտե կրակել:

Մի քանի ձիավորներ խրվեցին ամբոխի մեջ, ձիաներով
ցրելով մարդկանց: Մետելիցան թշնամու վրա ընկած իր
ամբողջ մարմնով, աշխատում եր նրա բողազը բռնել բայց
նա գալարվում եր, փոած յափնջին, ասես թեր, և գողա-
ցող ձեռքը տանում ե գոտու մոտ, աշխատելով դուրս քա-
շել ատրճանակը: Վերջապես հաջողվեց կորուրի կոճակը
քակել և համարյա թե նույն վայրկյանին, յերբ Մետելիցան
ըռնեց նրա կոկորդը, նա մի քանի անգամ կրակեց նրա վրա...

Ցերը վրա հասած կազակները քարշ եյին աալիս Մետե-
լիցայի վոտքերից, նա գեռ գեմ եր առնում խոտերին, կըրճ-
տացնում եր ատամներով, աշխատելով գլուխը բարձրացնել,
բայց գլուխը անոգ ընկնում եր ու քարշ գալիս գետնի վրա:

— Նեշիտայլո! — բոռում եր գեղեցիկ ոֆիշերը. — հա-
վաքել եսկադրոնը!.. Դուք ել կգնաք! — Հարցրեց նա քաղա-
քավարությամբ եսկադրոնի պետին, խուսափելով, սակայն,
նայել նրա վրա:

— Այո!

— Զի հրամանատարին!

Կես ժամից կազակների եսկադրոնը դուրս յելավ գյու-
ղից ուազմական կարգով և արշավեց դեպի վեր այն ուղղու-
թյամբ, վորով յերեկ գալիս եր Մետելիցան:

—

Բակլանովը, վոր բոլոր մնացածների հետ խիստ անհան-
գատություն եր զգում, վերջապես չհամբերեց.

— Լսիր, թող յետ առաջ անցնեմ, — ասեց նա Լկինսո-
նին. — Զե՞ վոր իրոք սատանան գիտի...

Նա ասպանդակեց ձիուն և ավելի շուտ, քան ինքն եր
սպասում, մոտեցավ անտառի յեղբին, տնակին, Սակայն նա
կարիք չզգաց տնակի կտուրը բարձրանալու, — կես վերստ
հեռավորության վրա բլուրից ցած եյին իջնում հիսուն
ձիավոր: Նա տեսավլ վոր դա կանոնավոր զորամաս և —
ինչպես այդ յերեսում եր միակերպ դեղին բծավոր հագուս-
տից: Հաղթելով իր անհամբերությունը — արագորեն վերա-
դառնալ և նախազգուշացնել վտանգի մասին (Լկինսոնը
կարող եր ուր վոր և յերեալ), Բակլանովը մնաց մի քիչ,
թագնվելով թփերի մեջ, ցանկանալով ստուգել, թե արդյոք
բլուրի յետելից նոր զորամասեր կերևան թե վոչ: Բայց
այլևս վոչ վոք չերեաց: Եսկադրոնը շարժվում եր քայլով,
խախտված շարքերով. ըստ մարդկանց նստվածքի և տաքա-
ցած ձիաների գլուխերի թափահարության, եսկադրոնը քիչ
առաջ շարժվել եր արագվագ:

Բակլանովը դարձրեց ձիու գլուխը և քիչ մնաց գեմ գա
լինսոնին, վորը դուրս եր գալիս անտառի յեղբից, նա
ձեռքով նշան արեց, վոր կանգ առնի:

— Շմտ են, — հարցրեց Լկինսոնը նրան լսելուց հետո:

— Մոտ հիսուն մարդ:

— Հետեմկ:

— Վոչ, ձիավոր...

— Կուբրյակ, Դուրսով, իջեք ձիաներից! — կամաց հրամա-
յեց Լկինսոնը. — Կուբրյակ, դու աջ թեռում, Դուրսով — դու
ձախ... Յես քեզ ցույց կտամ!.. — Փշշաց նա հանկարծ, նկա-
տելով ինչպես մի թուշը կապած պարտիզան, դարձրեց ձին
այլ կողմ, գայթակղելով ուրիշներին: — Տեղդ! — և սպանաց
նրան մտրակով:

Հանձնելով Բակլանովին Մետելիցայի ջոկատի հրամա-
նատարությունը և կարգադրելով, վոր նա մնա այստեղ,
ինքը իջավ ձիուց և գնաց շղթայի առջևից, թեթև շորորե-
լով մառզերը:

Առանց թփերից դուրս գալու նա պառկեցրեց այստեղ
շղթան, իսկ ինքը մի պարտիզանի ուղեկցությամբ անցավ
դեպի տնակը: Եսկադրոնը բոլորովին մոտ եր: Գլխարկների
դեղին շերտերից և լամպաներից նա հասկացավ, վոր կա-

զակներ եյին... Նա տեսավ և սև յափնջավոր հրամանաւարին:

— Ասա, թող այս կողմ սողան, — շշնջաց նա պարտիզանին, — միայն թող գլուխները չբարձրացնեն, թե չե... հը, ի՞նչ ես նայում! շուտ. — ու հրեց նրան, ունքերը կիտելով:

Թեև կազակները թվով քիչ եյին, բայց Լեհնոսոնը հանկարծ խիստ այլայլվեց, ինչպես իր զինվորական գործներության առաջին վաղեմի շրջանում:

Իր ռազմական կյանքում նա տարբերում էր յերկու շրջան, վոր բաժանված չեյին իրարից հատու գծով, բայց վոր նրա համար տարբերվում եյին ըստ այն զգացումների, վոր ինքն եր ապրում այդ շրջաններում:

Առաջներում, յերբ չունենալով վոչ մի զինվորական պատրաստություն, մինչեւսկ կրակելու անսովոր, ստիպված եր ղեկավարել ճասաները, նա զգում եր, վոր ինքը իրոք չի ղեկավարում, այլ ղեղքերը զարգանում են իրենից անկախ, իր կամքից գուրս: Վոչ թե նրա համար, վոր անաղնիվ կերպով եր կատարում իր պարտքը, — վոչ, նա ձգտում եր տալ իր կարողացածից ավելին, և վոչ թե նրա համար, վոր նա մտածում եր, թե առանձին մարդուն վիճակված չե ազգել այն ղեղքերի վրա, վորոնց մեջ մասնակցում են մարդկային մասսաներ, — վոչ, նա այդ տեսակետը համարում եր մարդկային կեղծավորության ամենավատթար արտահայտություն, վոր թագնում եր այդպիսի մարդկանց սեփական անզորությունը, այսինքն գործնեյության կամքի բացակայությունը նրանց մեջ, — այլ նրա համար, վոր իր զինվորական գործնեյության այդ առաջին կարճ շրջանում, նրա զրեթե բոլոր հոգեկան ուժերը կենարոնացած եյին իր սեփական ահը, վոր ինքը ակամա զգում եր, հաղթահարելու և մարդկանցից թագնելու մեջ:

Սակայն նա շատ շուտ ընտելացավ հանգամանքներին և հասավ այն վիճակին, յերբ սեփական կյանքի ահը չեր խանգարում նրան տնօրինել ուրիշների կյանքը: Այդ յերկրորդ շրջանում նա հնարավորություն ուներ ղեկավարելու ղեղքերը — այնքան ավելի կատարյալ ու հաջող կերպով, վորքան ավելի պարզ ու ստույգ նա կարող եր շոշափել

նրանց իրական ընթացքը և նրանց միջի մարդկանց և ուժերի հարաբերությունը:

Բայց այժմ նա նորից խիստ այլայլվում էր, և նա զգում եր, վոր այդ կապված ե իր նոր վիճակի հետ, իր բոլոր մտքերի հետ իր մասին, Մետելիցայի մահվան հետ:

Մինչև թիերի մեջ ցրված շղթայի մոտ սողալը, նա տիրապետեց ինքն իրան, և նրա փոքրիկ, ամփոփված մարմինը հավաստի ու ստույգ շարժումներով առաջվա նման կանգնեց մարդկանց առաջ իրեւ մի անսխալ պլանի մարմացում, պլանի, վորին մարդիկ հավատում եյին ըստ սովորության և ներքին անհրաժեշտության:

Եսկաղըրոնը արդեն այնքան մոտ եր, վոր լսելի յեր ձի-յերի գոփյունը և ձիավորների զուսպ զրույցը, — կարելի եր տեսնել նորյանիսկ առանձին դեմքեր: Լեհնոսոնը տեսնում եր նրանց արտահայտությունները — առանձնապես մի գեղեցիկ և գեր ոփիցերի, վոր հենց նոր առաջ անցավ, ծխամորճը ատամներում պահած, և վոր շատ վատ եր պահում իրեն թամբի վրա:

«Այ, յերկի, սա գաղան ե» — մտածեց Լեհնոսոնը, կանգ առնելով հայացքով նրա վրա և ակամա վերագրելով այդ գեղեցիկ ոփիցերին բոլոր այն սարսափելի հատկությունները, վոր առնասարակ վերագրում են թշնամուն: — Բայց ի՞նչ ուժեղ ե բարախում սիրաս! — ... կամ գուցե արդեն կրակել... կրակել... վոչ, այն կեղևահան բարդու մոտ... Բայց ինչու այդքան վատ և նստած թամբում... Զե, ինչքան անհա...»

— «Զոկատա! — գոչեց նա հանկարծ բարակ, կերերող ձայնով, (հենց այդ վայրկյանին եսկաղըրոնը մոտեցավ այն կեղևահան բարդուն) — կրակ!..

Գեղեցիկ ոփիցերը, լսելով նրա ձայնի առաջին հնչյունները, զարժացած բարձրացրեց գլուխը: Բայց միենալու վայրկյանին վլխարկը ցած ընկավ նրա վլխից և նրա դեմքը անորինակ վախեցած ու անզնական արտահայտություն ստացավ:

— Կրակ! — նորից գոչեց Լեհնոսոնը և կրակեց ինքը, աշխատելով իսկիել գեղեցիկ ոփիցերին:

Եսկադրոնը իրար խառնվեց. շատաբը, — ի թիվս վորոնց և գեղեցիկ ոֆիցերը — ցած զլորվեցին։ Մի քանի վայրկյանի ընթացքում իրար խառնված մարդիկ ու յետին փոտքերի վրա բարձրացրած ձիյերը, խոնված միասին, խփում եյին ու աղաղակում, ինչ վոր բոռալով, վոր սակայն անլսելի յեր պայթյունների ձայներից։ Հետո այդ խռնվածքից դուրս թռավ մի ձիավոր, սև փափախը գլխին ու յափնջով, որորաց եսկադրոնի հանդեպ, սանձահարելով ձիուն լարված շարժումով և թափահարելով թուրը։ Մնացածները, ինչպես յերկում ե, վատ եյին հնազանդվում նրան, — վոմանք արդեն հեռու եյին սլանում, մտրակելով ձիերին։ Ամբողջ եսկադրոնը սլացավ նրանց յետեկից։

— Զիեր!.. — կոչում եր լեինսոնը! — Բակլանով, այստեղ! հեծեք ձիերին!..

Բակլանովը կատաղի, ջղաձգված դեմքով թռավ նրա մոտից, ամբողջ մարմնով ձգված, ցած զցած այն ձեռքը, վորի մեջ սուրն եր, վոր փայլում եր, ինչպես ապակի, նրա յետեկից շայունով ու աղաղակով թռչում եր Մետելիցայի ջոկատը, գենքը ճոճելով։

Շուտով վորդ զորամասը սլացավ նրանց յետեկից։

Մեչիկը տարված ընդհանուր հոսանքով, սլանում եր այդ հորձանքի կենտրոնում։ Նա վոչ միայն ահ չեր զգում, այլ կորցրել եր նույնիսկ իր սովորական հատկությունը՝ հիշել սեփական մտքերն ու վարմունքները և գնահատել այդ բուրը կողմնակի մի աչքով, — նա միայն տեսնում եր իր առաջ ում վոր ծանոթ մեջքը, քյանքյուլավոր գլխով, զգում եր, վոր իր նևկան յետ չի մնում նրանից, վոր թշնամին փախչում ե իրենցից, և բոլորի հետ միասին աշխատում եր հասնել թշնամուն և յետ չմնալ ծանոթ մեջքից։

Կազակների եսկադրոնը պահվեց բարդիների պուրակում։ Մի քիչ հետո այնտեղից լսվեցին արագ հրացանի պայթյուններ, սակայն զորամասը շարունակում եր սլանալ, վոչ միայն չպակասեցնելով ընթացքը, այլև ավելի տաքացած։

Հանկարծ Մեչիկի առաջից սլացող թավամազ ձին դունչը գետին խրեց, իսկ ծանոթ մեջքի քյանքյուլավոր գլուխը

առաջ գլորվեց, ձեռքերը պարզելով։ Մեչիկը մյուսների հետ միասին մի կողմ թողեց մի ինչ վոր մեծ և սև բան, վոր գալարվում եր գետինի վրա։

Զտեսնելով այլևս ծանոթ մեջքը, նա աչքերը հառեց զեպի պուրակը, վորը մոտենում եր արագ... Մի փոքրիկ մորուքավոր մարմին, սև ձի հեծած, մի վայրկյան յերերաց նրա առաջ... Մի քանի ձիավորներ կողքկողքի ոլացող, հանկարծ շեղեցին գեպի ձախ, սակայն Մեչիկը չկուհելով, թե ինչումն ե բանը, սլանում եր առաջվա ուղղությամբ, մինչև վոր ընկավ պուրակը, և քիչ մնաց վոր ջախջախվեր ծառեղի բներին գիշչելով, չոր ճյուղերը քերծում եյին նրա յերեսը։ Նա հազիվ սանձահարեց իր նևկային, վոր խելակորույս թռչում եր թփերի վրայով...»

Նա մենակ եր — փափուկ բարդիների լուսթյան մեջ, տերեների և խոտերի վոսկու մեջ...»

Միենույն վայրկյանին նրան թվաց, վոր պուրակը լիքն ե կազակներով։ Նա մինչև անգամ ձաց, ինքն իրեն կորցրած, և յետ սլացավ։ ուշադրություն չդարձնելով, թե ինչպես սուր ու ծակող ճյուղերը ծեծում են իր յերեսը...»

Ցերք նա նորից դաշտ գուրս յեկավ, զորամասը արդեն չկար։ Ցերկու հարյուր քայլ հեռավորության վրա ընկած եր սպանված ձին, ցած ընկած թամբով։ Մոտը, վոտքերը ծալած, անհուսողեն գրկած իր ձեռքերով ծնկները, վոր սեղմլած եյին կրծքին, անշարժ նստած եր մեկը։ Դա Մորոզկան եր։

Մեչիկը, ամաչելով իր վախկոտությունից, հանդարտ քայլերով մոտեցավ նրան։

Միշկան ընկած եր մի կողքի վրա, բաց ատամներով, դուրս եր չոել իր մեծ, ապակիացած աչքերը, և առաջի վոտքերը սուր սմբակներով ծալած, կարծես թե նույնիսկ մեռած ուզում եր սլանալ։ Մորոզկան նայում եր, նրան շտեսնելով, փայլուն, չոր, չտեսնող աչքերով։

— Մորոզկա! — կամաց ձայն տվեց Մեչիկը, կանգ առնելով նրա գեմ և հանկարծ համակվելով մի լացկան, բարի կարեկցությամբ գեպի Մորոզկան ու այդ մեռած ձին։

Մորոզկան չշարժվեց։ Մի քանի բովկ նրանք մնացին այդպիս, անխոս ու անշարժ։ Հետո Մորոզկան հառաչեց, դան-

դաղորեն շարժեց ձեռքերը, բարձրացավ ծնկաչոք և, առաջվա
պես, առանց Մեչիկի վրա նայելու, սկսեց հանել ձիու վրա-
յից թամբը: Մեչիկը չեր վստահանում նորից խոսք բաց
անել, և լուռ դիտում եր:

Մորոզկան քանդեց դոլանները, — նրանցից մեկը ճղված
եր, — նա ուշադրությամբ տնտղեց կտրված, արյունով շա-
ղախված կաշու կտորը, պահեց մի քիչ ձեռքում և դեն
շպրտեց: Ապա նա տնքալով մեջքին դրեց թամբը և գնաց
դեպի պուրակը, կռացած, իր ծուռ վոտքերի անճոռնի քայլ-
վածքով:

— Տուր, յես տանեմ, կամ ուզում ես նստիր իմ ձին,
յես վոտքով կգնամ! — ասեց Մեչիկը:

Մորոզկան յետ չնայեց, միայն ավելի կռացավ թամբի
ծանրության տակ:

Մեչիկը աշխատում եր այլևս չերևալ Մորոզկայի աչքին,
դրա համար ել նա մոլոլ տվեց շատ և յերբ վոլորեց պու-
րակը, նա իրանից վոչ հեռու տեսավ հովիտում ընկած
գյուղը: Նրա աջ կողմը — ընդարձակ ստորոտում — մինչև
այն լեռնաշղթան, վոր շեղելով կորչում եր պղտոր-դորշ
հեռվում — տարածվել եր անտառը: Յերկինքը, վոր այնքան
հստակ եր առավոտվանից — այժմ ցած եր կախվել անուրախ,
արել հազիվ եր յերեռում:

Ճանապարհից հիսուն քայլ հեռավորության վրա ընկած
եյին մի քանի սրախողխող կազակների դիյերը: Մեկը տա-
կավին կենդանի յեր, նա դժվարությամբ բարձրանում եր
ձեռքերի վրա, և նորից ընկնում ու հառաչում:

Մեչիկը շարժվեց, աշխատելով հեռու մասլ մահացողից և
չլսել նրա հառաչները: Դյուղից նրա գեմ ելին գալիս մի
քանի ձիավոր պարտիզաններ:

— Մորոզկայի ձին սպանված ե... — ասեց Մեչիկը, յերբ
նրանք յուտեցան:

Վոչ վոք նրան չպատասխանեց: Նրանցից մեկը նայեց
նրան վոտքից զլուխ կասկածամիտ մի հայացքով, ասես
հարցնել եր ուզում, «իսկ վհրտեղ եյիր դու, յերբ մենք
կովում եյինք»: Մեչիկը, կռացած, շարժվեց: Նրա սիրտը
լիքն եր ամենաչար նախագուշակումներով:

Ցերբ նա գյուղ մտավ, պարտիզանների մեծ մասը արդեն
տեղավորված եր տներում, մնացածները խմբվել եյին մի
մեծ, բարձր ու նախշուն պատուհաններով հինգ պատանի
խրճիթի շուրջը: Լեինսոնը կանգնած եր շեմքին, յետ գցած
գլխարկով, քրտնած ու փոշածածկ, կարգադրություններ եր
անում: Մեչիկը իջավ ձիուց այն ցանկապատի մոտ, վորտեղ
կապած եյին ձիյերը:

— Վհրտեղից վհրտեղ — ծաղրով հարցրեց տասնա-
պետը: — Սունկ հավաքելու բյիր գնացել, համ:

— Չե, յես շեղվեցի, — ասեց Մեչիկը: Նրա համար այժմ
միենույն եր, թե ինչ են մտածում իր մասին, բայց նա
արդարանում եր ըստ սովորության: — Յես պուրակն ընկա,
իսկ դուք, կարծեմ, ծոեցիք դեպի ձախ:

— Ձախ, ձախ! — ուրախորեն հաստատեց մի շեկ, փոք-
րահասակ պարտիզան, վոր աքլորի հոխորտացող քյանքյուլ
ուներ ծոծրակին: — Յես քեզ կանչում եյի, իսկ դու ինչպես
յերեռում ե, չլսեցիր: — Յեզ նա հիացած նայում եր Մեչի-
կին, ըստ ամենայնի, հաճույքով հիշելով գործի բոլոր ման-
րամասնությունները: Մեչիկը կապեց ձին ու նստեց նրա
կողքին:

Նրբախողոցից յերեաց կուբրյակը գյուղացիների ամրուի
ուղեկցությամբ — նրանք քարշ եյին տալիս յերկու ձեռքերը
մեջքերին կապած մարդկանց: Նրանցից մեկը հագին ուներ
ուև ժիլետ, իսկ գլուխը մի անհարմար, կարծես ճմլած տեսք
ուներ և անհավասար ալեհերություն — նա սաստիկ դոզում
եր ու աղերսում: Մյուսը — այն վատուժ տերտերը, ծվատ-
ված ֆառաջայով, վորի տակից յերեռում եր ճմրթված վար-
տիկը կախ ընկած փոշտով: Մեչիկը նկատեց, վոր Կուբրյակը
գոտուց կապել ե արծաթե շղթա — յերևի, խաչի շղթան եր

— Սա յե, հա: — Գունատվելով հագած մարդուն, յերբ նրանք մոտե-
ցույց տալով ժիլետ հագած մարդուն, յերբ նրանք մոտե-
ցան տանը:

— Ինքը, հենց ինքն ե!.. — աղմկեցին գյուղացիք:

— Այսպիսի մի աղտ, — ասեց Լեինսոնը դառնալով
Ստացինսկուն, վոր նստած ե նրա կողքին, ճաղերի վրա, —
իսկ Մետելիցան ել չի կենդանանա... — նա հանկարծ արագ-

արագ թարթեց աչքերը, յերեսը դարձրեց և մի քանի վայրկյան լուռ նայում եր հեռուն, աշխատելով հեռացնել իր հիշողությունները Մետելիցայի մասին:

— Էնկերներ! Սիրելիք!.. — Լալիս եր կալանավորը, նայելով մերթ գյուղացիների, մերթ կեխսոնի կողմը շան հավատարիմ աչքերով: — Միթե յես իմ կամքով... Տեր աստված... Սիրելի ընկերներ...

Վոչ վոք չեր լսում նրան: Գյուղացիք յերես եյին դարձնում:

— Ել ինչ ես խոսում վողջ գյուղը տեսավ թե ինչպես եյիր ստիպում փոքրիկ հովվին, — դաժան ձայնով ասեց մեկը, անտարեր հայացքով չափելով նրան:

— Քո մեղքն ե... — հաստատեց մի ուրիշը ու շփոթված թագցրեց գլուխը:

— Գնդակահարել դրան, — սառնորեն ասեց կեխսոնը:

Միայն գորքան կարելի յե հեռու տարեք:

— Իսկ տերտերին: — Հարցրեց Կուբրյակը: Նույն շունն

ե: Ոփիցերներին եր հուրասիրում:

— Բաց թողեք, թող կորչի գնա...

Ամբոխը, վորին միացել եյին պարտիզաններից շատերը, վազեց սև ժիլետով մարդուն քաշ տվող Կուբրյակի յետեց: Մարդը քարշ եր գալիս համառելով, դեմ եր ընկնում վոտքերով ու լալիս, յերերացնելով ներքելի ծնոտը:

Զիժը մի ինչ վոր վատ բանով կեղտոտած գլխարկ գլխին, բայց անծածկելի հաղթական տեսքով, մոտեցավ Մեշիկին:

— Ահա թե վորտեղ ես! — ասաց նա ուրախացած ու հպարտ: — Այ թե վոնց են քեզ զարդարել! Գնանք մի վովնե տեղ ճաշելու... Հիմա նրանք նրա գործերը կկանոնավորեն — ասեց նա նշանակալից տոնով ու շվացրեց:

Խրճիթը, ուր նրանց ճաշ տվին, կեղտոտ եր, տոթ, հացի և թթու դրած կաղամբի հոտ եր գալիս Վառարանի մոտի անկյունը ամբողջովին լիքն եր կաղամբի գլուխներով: Զիժը, բերանը լցրած հաց ու ապուր, անընդհատ պատմում եր իր քաջադործությունների մասին և ամեն բողեք աչքի տակով նայում եր իրենց սպասավորող բարակ ու յերկար հու-

սերով աղջկան: Աղջիկը շփոթվում եր և ուրախանում: Մեշիկը աշխատում եր լսել, բայց ամբողջ ժամանակ սպասողական դրության մեջ եր ու ցնցվում եր ամեն մի թրխկոցից:

— ...և հանկարծ նա յետ դարձավ — ու վրաս ընկավ... — խոսում եր անվերջ, բերանը լցրած և չլմփացնելով, Զիժը, — և ահա յես նրան...

Այդ միջոցին զրնգացին ապակիները և լսվեց հեռու համազարկի ձայնը: Մեշիկը, ցնցվելով, ձեռքից վար գցեց գդալը ու գունատվեց:

— Յերբ պիտի վերջանա այս բոլորը... — բացականչեց նա հուսահատ և, յերեսը ձեռքերով ծածկած, դուրս յեկավ խրճիթից...

...«Նրանք սպանեցին այն ժիշետ հագած մարդուն, — մտածում եր նա դեմքը շինելի մեջ կոխած, պառկած թփերի մեջ — նա մինչև իսկ չեր հիշում, թե ինչպես եր յեկել այստեղ, — Նրանք վաղ կամ ուշ ինձ ել կսպանեն... Բայց յես առանց այդ ել չեմ ապրում — յես կարծես մեռած եմ: Յես այլես չեմ տեսնի իմ հարազատներին և այն սիրուն պայծառ գանգուրներով աղջկան, վորի նկարը յես պատառպատառ արի... իսկ նա, յերկի, լալիս եր, այն խեղճ, ժիշետ հագած, մարդը... Տեր իմ, ինչու յես պատառուեցի պատկերը: Յեկ միթե ել յերբեք չեմ վերադառնա նրա մոտ: Վորքան գժրախտ եմ յես!

Արդեն յերկոյ յեր, յերբ նա գուրս յեկավ թփերից չոր աչքերով և տանջանքի արտահայտությունը դեմքին: Ուր վոր շատ մոտիկ հարբած ձայներ եյին լսվում և նվագում եր գարմոնը: Դարբասի մոտ նա հանդիպեց բարակ յերկար հուսերով աղջկան, — նա ջրափայտը ուսին ջուր եր տանում և կռացել եր ինչպես ճյուղ:

— Ո, ձերոնցից մեկը մեր տղերանց հետ մի քեֆ և անում վո՞ր, — ասեց աղջիկը բարձրացնելով թուխ թերթերունքները ու ժպտաց, — նա վոնց վոր... լսում եք: — Յեկ մոտիկից լսվող անհոգ յերաժշտության տակտին համաձայն թափահարեց նա իր գեղեցիկ գլուխը: Ջրամաններն ել շարժվեցին ջուրը շաղելով, — աղջիկը ամաչեց և ներս փախավ:

А мы са-ами, каторжане,
Того да-ажидалися-а...

Լսվում եր մի խիստ հարբած ու Մեշիկին շատ ծանոթ ձայն։ Մեշիկը նայեց դեպի անկյունը և տեսավ Մորոգկային, գարմոնը ձեռքում, գզզված քանքըլով, վոր ցած եր կախվել աչքերի վրա և կպել եր նրա կարմիր, քրտնած ճակատին։

Մորոգկան գնում եր փողոցի կենտրոնով, ցինիկական շարժվածքով, առաջը դուրս ցցած, և ձգելով գարմոնը այնպիսի — «սրտանց» — արտահայտությամբ, կարծես նա շնանում եր և միւնույն ժամանակ քավում — իսկ նրան հետեւում եյին նրա պես հարբած տղերք, առանց գոտիների ու գլխարկների։ Նրանց կողքերից, փոշու ամպեր բարձրացնելով, վազում եյին վոտարոբիկ յերեխաները, սատանաների պես կայտառ ու անխիղճ։

Ա-ա... իմ սիրելի բարեկամ!... — Հարբած կեղծավոր հիացումով — կանչեց Մորոգկան, Մեշիկին տեսնելով, — Ո՞ւր ես գնում, ուր Մի վախենա — չենք ծեծի... Խմիր մեղ հետ... Ախ, ջանդ դուս գա — մեկտեղ ենք կորչելու...»

Նրանք վողջ խմբով շրջապատեցին Մեշիկին, գրկելով նրան. թեքում եյին դեպի նա իրենց բարի, հարբած յերեխաները, բուրելով նրա վրա գինու հոտը, իսկ մեկը նրա ձեռքն եր կոխում մի շիշ ու կծած մի վարունգ։

— Վոչ, վոչ, յես չեմ խմում, — ասում եր Մեշիկը, դուրս պըճնելով, — յես չեմ ուզում խմել...

— Խմիր, ջանդ դուրս գա! — գոռում եր Մորոգկան, ու քիչ եր մնում վոր լա զվարթ կատաղությունից։ — Ախ, հորդ գերեզմանը... արյունը..., աստվածը... միասին ենք կորչելու։

— Միայն քիչ, խնդրեմ, չե վոր յես չեմ խմում, — ասաց Մեշիկը, կակղելով։

Նա մի քանի կում արագ։ Մորոգկան շարժեց գարմոնը, յերգեց խոպոտ ձայնով, տղաները սկսեցին նույնպես յերգել։

— Գնանք մեղ հետ, — ասեց մեկը, Մեշիկի թևն անցնելով։ — „Ա յ ա շի-բ ւ տ յ ւ տ ա“ յերգեց նա խոպոտ ձայնով առաջին պատահած տողը, իր անթրաշ այտը քսելով Մեշիկի յերեսին։

Ու գնացին նրանք փողոցով, հանաքներ անելով և սայթաքելով, շներին վախեցնելով, հայհոյելով, մինչև նրանց վրա կախված անսատղ, մութ գմբեթով յերկինքը համառող հայհոյանքներով իրենց, իրենց հարազատներին, մերձավորներին, այս անհավատարիմ, դժվարին հողին։

ԶԱԽԶԱԽՈՒՄ*

Մինչդեռ դասակը հավաքվում և շարվում եր, հրաձգությունը կիսաշրջան գրավեց մինչև գետը, շաշեցին ուժանակները և գղրդացող, շողողուն ձկները սկսեցին զյուղի վրա ճախրել, Բակլանովը յերկարածիդ շինելի մեջ, ատրճանակը ձեռքին, վազեց դարպասի մոտ, գոռալով։

— Շտապել... շարվել մի կարգով... Մի քսան մարդ կթողնես ձիյերի մոտ, — ասաց նա Դուրովին։

— Իմ յետեից, վազքնվ — զոռաց նա մի քանի րոպե հետո և նետվեց ինչ-վոր ուղղությամբ խավարի մեջ. նրա յետեից, շինեները կոճկելով, փամփուշտակալները բաց թողաձ վազում եր շղթան։

Ճանապարհին նրանց հանդիպեցին փախչող պահակները։

— Նրանք ենտեղ անհաշիվ ուժ ունեն, — զոռում եյին նրանք, ձեռները խուճապալից թափահարելով։

Թնդաց հրանոթային համազարկը. ոռոմբերը պայթեցին զյուղի կենտրոնում, մի ակնթարթ լուսավորելով յերկնքի մի կտորը, ծոված զանգատունը և ցողից փայլող տերտերական այգին։ Հետո յերկինքն ավելի մթնեց։ Հիմա ոռոմբերը պայթում եյին մեկը մյուսի յետեից, կարճ, հավասար ընդմիջութներով։ Մի տեղ, կողքից փալեց կրակը, — խոտի դեղ կամ խրճիթ եր այրվում։

Բակլանովը պետք ե պահեր թշնամուն այնքան ժամանակ, մինչև վոր կեխնսոնը կարողանար հավաքել ամբողջ պուղում ցրված ջոկատը. Բայց Բակլանովին մինչև իսկ չհաջողվեց ջոկատը հասցնել գոմերին։ Բոնկվող ոռոմբերի մից նա նկատեց թշնամու դեպի իրեն վազող շղթաները։

* Թարգմ. Խ. Ռազին.

Հրաճդության ուղղությունից և գնդակների սուլոցից նա հասկացավ, վոր թշնամին իրենց ձախ զրոյթեց անցավ գետով և ուր վոր ե, այն ծայրից կմտնի զուղը:

Զոկատը շեղակի աջ անկյունը նահանջելով, շարքերով վազելով և նրբանցքներն, այդիներն ու բանջարանցները անցնելով, գնդակուում եր թշնամուն: Բակլանովը գետի մոտերքում ականջ եր դնում հրաճդությանը, վորը շարժվում եր գեպի կենտրոնը. ինչպես յերեսում եր, այդ կողմը գրավված եր թշնամուց: Հանկարծ գլխավոր ճանապարհից սարսափելի ճիշերով սլացավ թշնամի հեծելազորը: Յերեսում եր, թե ինչպես փողոցները հախուռն կերպով լցվում եյին մութ, դղրդացող, բազմագույն ձիյերի և մարդկանց լավայով:

Թշնամուն պահելու մասին ել չհոդալով, Բակլանովը դասակի հետ միասին, կորցնելով մոտ տասը մարդ, դեռ չգրավված շերտով փախավ անտառի ուղղությամբ: Յեկ գրեթե հենց ձորի զառիվայրին, ուր ձգվում եր խրճիթների վերջին շարքը, նրանք դեմ յելան Լեինսոնի գլխավորությամբ իրենց սպասող վաշտին: Վաշտը նկատելի կերպով նոսրացել եր:

— Ահա նրանք, — թեթևացած ասաց Լեինսոնը: — Շնուր դեպի ձիյերը:

Նրանք վերցրին ձիյերը և ամբողջ թափով սլացան գեպի անտառը, վոր սկին եր տալիս ներքեսում: Նըանց, յերեխ, նկատեցին, — յետևից դղրդացին գնդացիրները և միանգամից նրանց գլուխների վրա լսվեց գիշերային կապարե ճանձերի, իրգը. Իրեղեն, դղրդացող ձկները նորից սկսեցին թպրտալ յերկնքում: Նրանք սուզվում եյին յերկնքում, բաց թողած պսպղուն պոչերը և բարձր Փշոցով խրվում եյին հողի մեջ, ձիյերի վոտների մոտ: Ձիյերը հոնդում եյին, արնոտ, տաք յերախները բացած և կանանց նման ճչալով, զոկատը սեղմակում եր, յետևում թողնելով վիստացող դիմակներ:

Յետ նայելով Լեինսոնը տեսավ մի վիթխարի շառագույն, վորը տարածված եր զյուղի վրա: Վասվում եր մի ամբողջ թաղ. — այդ շառագույնի ֆոնին ձգվում եյին առանձին կամ խմբով սկ, հրազեմ մարդկանց կերպարանքներ:

— Լեինսոն, մտիկ, — վրդովված բացականչեց Բակլանովը և ձեռքով ցույց տվեց աջ կողմը:

Զոկատն արդեն գտնվում եր ներքեսում և արագ մոտենում եր անտառին, մինչ վերեկից, կարելով սկ զաշտի և յերկնքի գիծը, նրանց ճամբան եր կտրում թշնամու հեծելազորը Ձիյերը, ձգած, սկ գլուխներով, և նրանց վրա կռացած հեծյաները մի ակնթարթ յերեսում եյին յերկնքի ավելի լուսավոր ֆոնին և խորոյն անհետանում, խավարում, լցվելով այստեղ՝ ներքենը:

— Շնուր, շնուր... — գոռում եր Լեինսոնը, անընդհատ յետ նայելով և ասպանդակելով նժույգին:

Վերջապես նրանք հասան բացատին և ձիյերից իջան: Բակլանովը Դուրովի դասակի հետ նորից մնաց նահանջը ծածկելու համար, իսկ մնացածները, քաշ տալով ձիյերի սանձերից՝ նետվեցին անտառի խորքերը:

Անտառում ավելի հանգիստ եր և խոռվ: Գնդացիրային կափկափյունը, հրացանային ճարճաւայունն ու հրանոթային համազարկը մնացին յետեսում և թվում եյին ինչ-վոր կողմնակի բան, վորն, ասես անկարող ե խանգարել անտառային անդորրը Միայն յերբեմն լսվում եր, թե ինչպես մի աեղ, ծառերը ջարդելով, ընկնում եյին ոռումբերը: Այլ տեղերում շառագույնը, թավուտը թափանցելով, հողին և ծառերի բներին մոյալ պղնձե, մթնող ծայրերով շափյուղներ եր նետում և նկատելի դարձնում բները պատող խոնավ, ասես արյունոտված մամուռը:

Լեինսոնը Յեփիմին հանձնեց իր ձին և Կուրբյակին առաջ գցելով ցույց տվեց նրան, թե ինչ ուղղությամբ գնալ (նա այդ ուղղությունը ընտրեց միայն նրա համար), վոր պարտավոր եր վորեն ուղղություն ցույց տալ), ապա ինքը մի կողմ քաշվեց, վորպեսզի տեսնի, թե քանի՞ մարդ ե մնացել:

Նրանք անցնում եյին իր մոտով, այդ մարդիկը, ճնշված, թրջված ու չար, ծանրորեն ծալելով ծնկները և լարված գիտելով մթությունը, — նրանց վոտների տակ ճղիկում եր ջուրը: Յերբեմն ձիյերը ընկնում եյին փորերին. գետինը շատ մածուցիկ եր: Առանձնապես դժվար եր Դուրովի դասակի գործը, — նրանք իրենց հետ տանում եյին յերեքական ձի. միայն Վարյան իր հետ տանում եր յերկուսը՝ իր և Մարողկայի: Իսկ այդ առաջահար մարդկանց ամբողջ շարանի յետեկից ձգվում

եր տայգայով ցեխուտ, հոտած դալարուն մի հետք, ասես
այդտեղով սողացել եր ինչ վոր գարշելի, կեղտոտ սողուն:

Լեինսոնը, յերկու վոտների վրա կաղալով, գնում եր բո-
լորի յետեմց: Հանկարծ ջոկատը կանգ առավ...

— Ի՞նչ պատահեց այնտեղ, — հարցրեց նա:

— Զգիտեմ, պատասխանեց նրա առաջից գնացող պար-
տիզանը:

— Իմացիր շղթայից:

Մի քիչ վերջը ստացվեց պատասխանը, տասնյակ գու-
նաթափ, դողովովուն շրթունքներում կրկնվելով:

— ...Ել առաջ անցնել չի լինի: Ճահճուտ ե...

Լեինսոնը, վոտների հանկարծակի դողը ձնշելով, վազեց
կուբբյակի մոտ: Հազիվ եր նա թագնվել ծառերի յետեռում,
յերբ մարդկային ամբողջ բազմությունը յետ մղվեց և ցրվեց
դանաղան կողմ. բայց ամենուրեք, ճանապարհը փակելով,
ձգվում եր մածուցիկ, մութ, անանցանելի ճահճը: Այստեղից
միայն մի ճանապարհ կար, — դա նրանց անցած ուղին եր
այնտեղ, ուր արիաբար կովում եր շախայորների դասակը:
Բայց հրաձգությունը, վոր լսվում եր անտառի բացատից,
այլև ինչ վոր մի կողմնակի բան չեր թվում. Նա այժմ ամե-
նաանմիջական կերպով իրենց եր վերաբերում: Այժմ այդ
հրաձգությունը նույնիսկ կարծես թե նրանց եր մոտենում:

Մարդկանց տիրեց հուսահատ կատաղություն: Նրանք
փնտրում եյին իրենց դժբախտության մեղավորին, — դա,
իհարկե, լեինսոնն եր... Յեթե բոլորը միանգամից կարողա-
նային այժմ նրան տեսնել, նրանք իրենց յերկյուղի ամբողջ
ուժքնությամբ նրա վրա կթափվելին: Թող դուրս հանի նա
իրենց այստեղից, ինչպես վոր կարողացել ե այստեղ բերել:

Յեվ հանկարծ նա ճիշտ վոր յերեաց նրանց մեջ, մարդ-
կային զանգվածի հենց կենտրոնում, վառված ջահը ձեռ-
քում բարձրացրած, վոր լուսավորում եր նրա մեռելային
գունատ միբուքավոր դեմքը, սեղմված ատամներով, մեծ,
վառվող, կլոր աչքերով, վորոնցով նա արագորեն մի գեմ-
քից մյուսն եր վագում: Յեվ հանկարծակի տիրած լսության
մեջ, վորը խանգարում եյին այնտեղ, անտառի բացատում

բարակ, սուր և խոպոտած ձայնը բոլորի համար լսելի՝ հնչեց.

— Ո՞վ ե այնտեղ շարքերը քանդում... Յետ, աղջկները
միայն կարող են խուճապի մեջ ընկնել: Լոելք — ճաց նա
հանկարծ գայլի պես ատամները կրծտացնելով, դուրս քա-
շելով մառւգերը, և բողոքող ձայները վայրկենապես սառե-
ցին շրթունքներում: — լսել իմ հրամանը, — մենք պետք ե
ճահճը ձեղանենք: Մեզ համար ուրիշ յելք չկա... Բորիսով, —
(դա 3-րդ դասակի նոր հրամանատարն եր), — թող և գնա
Բակլանովին ոգնության: Ասա նրան, վոր դիմանա մինչեւ
նահանջի հրաման արձակելս... Կուբրյակ... Զոկել յերկու
մարդ Բակլանովի հետ կապ պահպանելու համար... Լսեցեք
ամենքդ, Կապեցեք ձիյերը: Յերկու մաս — թփերի յետեռում: —
չինայել թրերը... Մնացած բոլորը Կուբրյակի տրամադրու-
թյան տակ: Լսել նրան առանց հակածառության: Կուբրյակ,
հետեւիր ինձ... — նա շուռ յեկավ ու, գլխի վերև բռնած ծխա-
ղող ձյութը դիմեց դեպի ճահճուտը:

Յեվ հանդարտված, ճնշված, մի կույտի վերածված մարդ-
կանց զանգվածը, վորը քիչ առաջ, հուսահատորեն ձեռքերը
պարզած, պատրաստ եր լալ ու սպանել, հանկարծ շարժվեց
գերմարդկայնորեն արագ, հնազանդ ու մոլեգին: Մի քանի
ակնթարթում ձիյերը կապված եյին, կացինները թրխկացին,
լուստենին ճարճատեց սուսերի հարվածների տակ: Բորի-
սովի ջոկատը վազեց խավարի մեջ, աղմկելով զենքերով և
սապոդներով ճղփացնելով, նրանց հանդեսը, արդեն քաշ եյին
տալիս թաց թփերի առաջին խրձերը լսվում եր ընկնող
ծառերի դղրդյունը և ահագին, բազմավոստ, սուլող հսկա-
ները շրփվում եյին ինչ-վոր կակուդ, կործանիչ բանում և
վառված ձյութի լույսի մեջ յերեռում եր, թե ինչպես մութ-
կանաչ մամուկալած ջրոսպի մակերևույթը հսկայական ոձի
մարմնի պես փովում եր ուռուցիկ ալիքներով:

Այնտեղ, ձյուղերին կպած, ջրում, կործանման
մեջ վխտում եյին մարդիկ, լուսավորված ծխոտ բոցով, վոր
դուրս եր կորզում խավարի միջից այլայլված գեմքեր, կո-
րացած կոնակներ, ձյուղերի հրեային կուտակում: Նրանք
աշխատում եյին, պոկելով իրենց վրայից շինեները, և ճեղք-
տված վարտիք-շապիկի մեջից յերեռում եյին նրանց լարված,

քրտնած և մինչև արյունը չանգոված մարմինները, Նրանք կորցրել եյին ժամանակի, տարածության, սեփական մարմին, ամոթի, ցավի և հոգնածության ամեն մի զգացում: Նրանք տեղն ու տեղը դուրս եյին քաշում գլխարկներով ճահճային ջուրը, վորի մեջ լողում եր գորտի կորած խավյարը, և խմում եյին այն ագահաբար ու շտապով, վիրավոր գաղան-ների նման...

Իսկ հրաձգությունը ավելի և ավելի վրա յեր հաս- նում, դառնալով ավելի տաք ու լսելի: Բակլանովը մեկը մյուսի յետեկից մարդիկ եր ուղարկում և հարցնում, — շնուտ կլինի, շնուտ... նա կորցրել եր մարտիկների կեսը, կոր- ցրել եր արյունահոս Դուրովին և դանդաղ նահանջում եր, գլխելով թիզը թզի յետեկից: Վերջի վերջո նա մոտեցավ թփուտներին, վորոնց կտրում եյին ճահճը ճեղանելու հա- մար, — ել նահանջելու տեղ չկար: Թշնամու գնդակները այժմ խիտ կերպով սուլում եյին ճահճի վրա. աշխատողներից մի քանիսը արդին վիրավորվել եյին: Վարյան նրանց վերքերն եր կապում: Զիյերը, հրաձգությունից վախեցած, մոլեզնո- րեն խրխնջում եյին ու ծառս յելնում, մի քանիսն ել, սան- ձափոկերը կտրելով, տայգա նետվեցին և խրվելով ճահճու- տում, խղճալիորեն ոգնության եյին կանչում:

Հետո թփուտների վրա ընկած պարտիզանները, իմա- նալով, վոր ճեղանը պատրաստ ե, — սկսեցին փախչել: Բակ- լանովը ներս ընկած այտերով, բորբոքված աշքերով, վա- ռողածից սկացած՝ վաղում եր նրանց յետեկից, իր դատարկ- ված կոլտով սպառնալով և լաց եր լինում կատաղությունից:

Գոռալով և ձյութն ու զենքը թափահարելով, քաշ տա- լով իր յետեկից ընդդիմադրող ձիյերին, վաշտը գրեթե մի անգամից խուժեց դեպի ճեղանը: Գրգոված ձիյերը չեյին լսում առաջնորդներին և խփում եյին ցավագարների պես, յետեկները ցնորված խցկում եյին առաջինների մեջ և դրանից ճեղանը ճարճատում եր և իջնում: Մյուս ափը յել- նելիս՝ Մեչիկի ձին սայթաքեց ճեղանից և նրան դուրս եյին քաշում պարանաերով: Մեչիկը զղաձգորեն կպել եր լարձուն թոկից, վորը դողում եր նրա ճեռքին միու մոլեզնությու- նից, և ձգում եր, ձգում, վոտները խճողած ցեխոտ ուսե-

թփերում: Իսկ յերբ ձիուն դուրս քաշեցին վերջապես, նա- յերկար չեր կարողանում քակել ձիու առջեկի վոտներին քաշ- ված հանգույցը և կատաղի հրճվանքով ատամներով բռնել եր- այն, — ճահճի բույրով և զզվելի լորձունքով ծծված այդ հանգույցը:

Ամենավերջը թմբովն անցան Լեինսոնն ու Գանչարենկոն: Պայթեցնողը շտապեց տեղավորել դինամիտի Փուգասը և գրեթե հենց նույն վայրկյանին, յերբ հակառակորդը համար անցարանին, — ճեղանը ոդը ցնդեց...

Մի քիչ հետո մարդիկ սթափեցին և հասկացան, վոր արդեն առավոտ ե: Նրանց առաջ ընկած եր շրջողուն յեղ- յամով ծածկված տայգան. ծառերի արանքների վրա յերեա- ցին կապույտ յերկնքի վառ պատառները. զգացգում եր, վոր այնտեղ, անտառի յետեկում, բարձրանում և արել: Մարդիկ նետեցին իրենց ձեռքից խանձուկները, վոր գեռ բռնել եյին գուր տեղը, տեսան իրենց կարմիր, այլանդակված ձեռքերը, թաց, տանջված ձիյերին, վորոնք ծխում եյին քնքուշ, հալ- վող գոլորշիներով, — և ապշեցին այն ամենին, ինչ վոր կա- տարել եյին այդ գիշերը:

Հինգ վերսա հետավորության վրա այն տեղից, ուր պար- տիզանները ճեղան եյին նետել, — ճահճուտի վրայով մի կա- մուրջ եր ձգված, վորտեղից անցնում եր Տուտո-Վակա տա- նող պետական խճողին: Դեռ յերեկ յերեկո, վախենալով, վոր Լեինսոնը չի գիշերի գյուղում, կաղակները հենց ճա- հճապարհին, կամքջից մոտ ութ վերսա հեռավորության վրա- դարձն եյին մտել:

Նրանք այդտեղ մնացին ամբողջ գիշերը, սպասելով Լե- վինսոնի ջոկատին, և լսում եյին հրանոթների հեռավոր համազարկերի ձայնը: Առավոտյան սրարշավ յեկած բան- բերը հրաման բերեց — մնալ տեղերում, վորովհետեւ թշնա- մին, ճահճուտը ճեղքելով, գալիս և իրանց կողմը:

Իսկ բանքերի գալուց մի տաս րոպե միայն անց Լեին- սոնի ջոկատը, վորը վոչինչ զգիտեր այդ դարձանի, այլև հենց նոր իր կողքից սրարշավ անցած թշնամու բանքերի մասին, նույնպես յելագ Տուտո-Վակի խճողին:

Արեն արդեն բարձրացել եր անտառի վրա։ Յեղամը վաղոց եր հալվել։ Յերկինքը վերեւում բացվել եր, թափանցիկ — սասցային կապույտ։ Ծառերը բաց, շողզողուն փոսկու մեջ կռացել եյին ճանապարհին։ Տաք, վոչ-աշնանային որ եր բացվում։

Լեինսոնը մտացիր մի հայացք նետեց ամբողջ այդ պայծառ, մաքուր և փայլուն գեղեցկության վրա և չզգաց այն։ Տեսավ իր տանջված, յերեք անդամ նոսրացած ջոկատը, վոր վհատորին փոված եր ճամբին, և զգաց, թե ինչպիս մահու չափ հոգնած եինքը և անզոր և մի բան անելու այդ մարդկանց համար, վորոնք վհատ քաշ եյին գալիս իր յետեից։ Այժմ նա միմիայն նրանց հանդեպ անտարբեր չեր, միայն նրանք եյին մոտ իր սրտին՝ — այդ հոգնատանջ, հավատարիմ մարդիկ նրան ավելի մոտ եյին, քան վորեև այլ բան, նույնիսկ իրանից ել ավելի մոտ, վորովհետև նա մի վայրկյան իսկ չեր դադարում զգար, վոր նա ինչ-վոր բանով պարտական ե նրանց։ բայց Լեինսոնին թվում եր, թե նա այլևս վոչինչ չի կարող անել նրանց համար, նա այլևս չեր զեկավարում նրանց, և նրանք այդ գեռ չգիտենալով քաշ են գալիս նրա յետեից, իր առաջնորդին ընտելացած մի հոտի նման։ Յեկդա յեր այն ամենասոսկալին, վորից նա ամենից ավելի յեր վախենում, յերբ յերեկ առավոտյան մտածում եր Մետելիցայի մահվան մասին...

Նա փորձում եր մի կերպ հավաքել իր ուժերը, կենարունանալ վորեև գործնականորեն անհրաժեշտ բանի վրա, բայց նրա միտքն արդեն նրան չեր յենթարկվում և շաղվում եր, աչքերը գոցվում եյին և տարորինակ պատկերներ, հիշողությունների ծվեններ, ըրջապատի աղոտ, մշուշոտ և հակասական զգացմունքներ լողում եյին նրա գիտակցության մեջ, անվերջ փոփոխվող, անձայն ու անմարմին յերաններով...

«Ի՞նչի՞ համար և այս յերկար, անծայր ճանապարհը, և այս թաց տերեւուտը, և յերկինքը, վորն այնպես մեռած ե ու ել անպետք ինձ համար...» Արդյոք ինչ և թելադրում ինձ այժմ իմ պարտականությունը...

Համար պարտավոր եմ Տուգո-Վակի հովիտը յերեկ... Վա... կի հովիտը — ինչ տարորինակ և Վա... կի հովիտը...

բայց ինչպես հողնած եմ, քունս ինչպես և տանում։ Ել ինչ կարող են ինձանից պահանջել այս մարդիկը յերբ քունս այսպիս տանում ե...

Նա ասում ե — հետախույզներ ուղարկենք... Այն, այն պետք ե ուղարկել... Նրա գլուխը կլոր ե և բարի, ինչպես վորդուս գլուխը. ինարկե պետք ե հետախույզներ ուղարկել և նոր քնել... քնել... Յեկ նույնիսկ վոչ թե վորդուս գլուխ նման, այլ... ի՞նչ...

— Ի՞նչ ասացիր, — հարցրեց նա հանկարծ, գլուխը բարձրացնելով։

Նրա կողքով գնում եր Բակլանովը։

— Ասում եմ, պետք ե հետախույզներ ուղարկել։

— Այն, այս, պետք ե ուղարկել Կարգադրիր խնդրեմ...

Մի ըովեյից Լեինսոնի մոտով առաջ անցավ մեկը, հոգնած ընթացքով, — Լեինսոնը հայացքով ճամբեց նրա կորացած մեջքը և ճանաչեց Մեչիկին։ Նրան սխալ թվաց, վոր Մեչիկն ե հետախույզ գնում, բայց նա չկարողացավ ստիպել իրեն այդ սխալը պարզելու և իսկոյն մոռացավ այն։ Հետո մի ձիավոր ել անցավ։

— Մորագկա, — կանչեց Բակլանովը գնացողին, — այնուամենայնիվ աշխատեցեք աչքից չթողնել իրար...

«Միթե չսպանվեց նա, — մտածեց Լեինսոնը։ Իսկ Դռնքովը սպանվեց... խեղճ Դռնքով... բայց ինչ եր պատահել Մորոզկային... Հա, հիշեցի, — այդ յերեկ յերեկոյան եր, Լավ վոր այն ժամանակ յես նրան չտեսած...»

Մեչիկը, վոր արդեն բավական առաջ եր անցել, յետ նայեց։ Մորոզկան նրացից հիսուն սաժեն յետ եր և ջոկատն ել գեռ յերեւում եր։ Ապա ջոկատն ել Մարոզկան ել շրջադարձի յետեր մնացին և աչքիցը կորան։ Նեկան չեր ուղում քառատրոփ գնալ և Մեչիկը մեքենայորեն քշում եր նրան։ Նա լավ չեր հասկանում, թե ինչու իրան առաջ ուղարկեցին, բայց իրեն հրամարված եր քառատրոփ գնալ և նա յենթարկվում եր։

Ճանապարհը գալարվում եր խոնավ սարալանջերով, խիս ծածկված կաղնիներով և թիկիներով, վոր գեռ պահպանում եյին մուգ-կարմրագույն տերեները։ Նեկան խլկոտվելով

ցնցվում եր և հպվում թփերին։ Վերելքին հասնելով, նա սկսեց հանդարտ քայլով գնալ, թամբին կպած Մեշիկը ննջում եր և ել ձեռք չեր տալիս ձիուն։ Ցերբեմն նա սթափվում եր և տարակուսանքով շուրջն եր նայում, իսկ շուրջը նույն անանցելի թափուտն եր, վոր վոչ վերջ ուներ, վոչ ել սկիզբ, ինչպես վերջ ու սկիզբ չուներ այն նիրհուն, բութ, շրջապատի հետ վոչնչով չկապված կացությունը, վորի մեջ գտնվում եր ինքը։

Հանկարծ նեկան յերկչոտ փոնչաց և նետվեց դեպի թփերը, սեղմելով Մեշիկին ինչ-վոր ճկուն վոստերի... Մեշիկը գլուխը ցնցեց և նրա նիրհուն դրությունը վայրկենապես անցավ, տեղի տալով մի անասելի կենդանական սարսափի՝ [ճանապարհին, մի քանի քայլ հեռավորության վրա կանգնած եին կազակները։

— Իջիր, — ասաց նրանցից մեկը խեղդված, սուլող շշունչով։ Մեկը բռնեց նեկայի սանձափոկը։ Մեշիկը, մեղմ բարցականչություն արձակելով, ցած սահեց թամբից և մարմինի մի քանի ստորացուցիչ շարժումներ անելով, հանկարծ շեշտակի գլորվեց ինչ-վոր տեղ, զառիվայրից ներքեւ։ Նրա ձեռքերն այնպես զարկվեցին թաց կոճղին, վոր ցավեցին։ Նա թռափ, վոտքի կանգնեց, լսուաց, — մի քանի վայրկյան սոսկումից համբացած թավալվեց, վերջապես վոտքի յենելով շտկվեց և վազեց ձորակի յերկայնքով, առանց զգալու իր մարմինը, ձեռքերը նետելով ամեն մի պատահած իրի և անյերևակայելի վոստուններ կատարելով։ Նրան հետապնդում ելին, նրա յետեկից լսում եր թփերի չրիկոց և մեկը չարասիրտ շեշտով հայնոյում եր...։

Մորոգկան, իմանալով, վոր իրենից առաջ մի հետախույզ ել և գնում, նույնպիս վատ եր հետեւմ այն ամենին, ինչ-վոր անցնում-դառնում եր իր շուրջը։ Նա գտնվում եր ծայրահեղ հօգնածության այն աստիճանում, յերբ ամեն ինչ չքանում ե իսպառ, նույնիսկ ամենակարևոր մարդկային մտքերը, և մնում ե մի անմիջական ցանկություն՝ հանգստի ցանկություն, հանգստի, ինչ գնով ել լինի... Նա ել չեր մտածում վոչ իր կյանքի, վոչ վարյայի մասին, վոչ ել այն մասին, թե ինչպես կվերաբերվի իրեն Գոնչարենկոն։ Նա

մինչև իսկ ուժ չոներ ափսոսալու Դուբովին, թեև Դուրովը նրա ամենամոտ մարդկանցից եր, — նա լոկ այն մասին եր մտածում, թե յերբ կրացվի իր առաջ այն ավիտյաց յերկիրը, վորտեղ կարելի կլինի գլուխը գետնին դնել, հանգել։ Այդ ավետյաց յերկիրը պատկերանում եր նրան, վորպես մի մեծ ու խաղաղ, արեով վողողված գյուղ, լի վորոճող կովերով ու լավ մարդկանցով, — մի գյուղ, վորը բուրում և անառուների և խոտի բուրմունքով։

Յեզ յերբ անակընկալ կերպով իր առաջ ցցվեցին կազակների դեղնաշրջան գլխարկները և Հուդան (ձին) յետ-յետ գնաց, խրելով նրան թփերի մեջ, վորոնք արնագույն տերեններով թրթուացին նրա աշքերի առաջ, — մեծ, արեով վողողված գյուղի ուրախալի տեսիլը իսկույն խառնվեց հենց նոր այստեղ կատարված սոսկալի չլսված դավաճանության վայրկենական գգացմունքին...։

— Փախել ե, գարշելի... — ասաց Մորոգկան, հանկարծ արտասովոր պարզությամբ պատկերացնելով Մեշիկի տաելի ու պարզ աշքերը և միենույն ժամանակ սիրու ձմլող թախծով կարեկցության զգացմունքը դեպի ինքը և իր յետեկց յեկող մարդիկը, — համակեց նրա յետությունը։

Նա վոչ թե այն եր ափսոսում, վոր հիմի պիտի մեռնի, այսինքն դադարի զգալուց, ապրելուց, շարժվելուց, — նա իսկի չեր կարողանում պատկերացնել իրեն նման անսովոր և տարորինակ վիճակում, վորովնետն այդ ըոպեյին նա դեռ ապրում եր, զգում ու շարժվում, — բայց նա պարզ կերպով լըմբոնեց, վոր նա ել յերբեք չի տեսնի արեով վողողված այն գյուղը և այն մոտիկ, սիրելի մարդկանց, վորոնք գալիս ելին իր յետեկց։ Բայց նա այնպիսի մի պայծառությամբ եր զգում նրանց իր մեջ, — այդ հոգնած, իրեն վստահած մարդկանց, վոր նրա մտքում նույնիսկ միտք ել չծագեց, թե իր համար կարող ե գյություն ունենալ մի ուրիշ յելք բացի վտանգի մասին նրանց նախազգուշացնելը... Նա գուրս քաշեց պատյանից ատրանակը և գլխից վեր բարձրացնելով, վորպեսզի ձայնն ավելի լավ լսվի, կրակեց յերեք անգամ, ինչպես պայմանավորվել ելին...։

Նույն ակնթարթում մի ինչ-վոր բան թնդաց, փայլատակեց, վորոտաց, աշխարհը ասես միջից կիսուց և նա Հուդայի հետ մեկտեղ գլորվեց թփերի մեջ...

Յերբ Լեինսոնը լսեց կրակոցների ձայնը, — դրանք այնքան անսպասելի եյին և այնպես անհնարին նրա համար իր ներկա կացության մեջ, վոր դա նույնիսկ չհասավ նրա գրակցությանը: Նա միայն այն ժամանակ ըմբռնեց նրանց նշանակությունը, յերբ Մորոզկայի վրա թնդացող համարակը վորոտաց և ձիյերը կանգնեցին արձանացած, գլուխները վեր ցցած և ականջները սրած:

Նա յետ նայեց մի անոգնական հայացքով, առաջին անգամ ուրիշի ողնությունը հայցելով, բայց պարտիզանների գունատ և նիհար հայացքներում, վորոնք միաձուլված, կազմել եյին մի դեմք, վորը իրեն եր նայում սարսափելի համբ հարցական մի արտահայտությամբ, — նա կարդաց միայն նույն անոգնականության և յերկյուղի արտահայտությունը...

«Ահավասիկ այն, — ինչից յես վախենում եյի», — մտածեց Լեինսոնը, և ձեռքով այնպիսի շարժում արեց, վոր կարծեւ մի բան եր փնտրում, վոր բռնի, բայց փնտրածը չգտավ...

Յեկ հանկարծ նա միանգամայն պարզ և վորոշակի տեսավ իր առջև Բակլանովի պարզ, մանկական, նույնիսկ մի քիչ միամիտ, հոգնածությունից ու ծխից կոպտացած ու սեացած դեմքը: Բակլանովը, մի ձեռքին բռնած ատրճանակը, մյուս ձեռքով ձիու բաշը, լարված ուշադրությամբ նայում եր զեպի այն կողմը, վորտեղից լսվեց համաղարկի ձայնը: Ու նրա միամիտ, խոշոր այտերով դեմքը, վորը մի փոքր առաջ եր ձգվել, սպասելով հրամանի, վառվում եր այն իսւկան և մեծագույն կրքով, հանուն վորի իրենց կյանքն եյին գոհաբերել ջոկատի լավագույն պարտիզանները:

Լեինսոնը ցնցվեց և ուզդվեց, և մի ինչ-վոր ցավադին ու քաղցր հույզ համակեց նրան... Նա հանկարծ դուրս քաշեց սուրբ պատյանից և փայլատակող աշքերով նույնպես առաջ ձգվեց:

— Ճեղքենք, համ, — հարցրեց նա Բակլանովից խոպոտ ձայնով, անսպասելիորեն սուրբ գլխից վեր բարձրացնելով:

այնպես, վոր նա շողջողաց արևի տակ, Յեկ յուրաքանչյուր պարտիզան, այդ սուրբ տեսնելով նույնպես ցնցվեց ու ձգվեց:

Բակլանովը մի կատաղի հայացք նետելով սրին, շեշտակի դարձավ դեպի ջոկատը և մի ինչ վոր բան ձչաց, կտրուկ ու սուր, բայց թե ինչ՝ Լեինսոնը չլսեց, վորովհետեւ այդ ակնթարթին հանձնված այն ներքին ուժին, վորը դեկավարում եր Բակլանովին և վորը հարկադրեց նրան մերկացնել սուրբ, նա առաջ սլացավ ճամբով, դգալով վոր վողջ ջոկատը սուրբալու յե այժմ իր յետեկց:

Յերբ մի քանի րոպե անց նա յետ նայեց, մարդիկ սրարշավ իրեն եյին հետեւում, կուցած թամբերին, լարվածնոտներն առաջ ցցած, և նրանց աչքերում կար նույն լարված ու կրքու արտահայտությունը, վորպիսին նա տեսավ Բակլանովի աչքերում:

Աս վերջին կապակցված տպավորությունն եր Լեինսոնի հիշողության մեջ. Նույն այդ ակնթարթին ինչ-վոր շացուցիչը վորոտալից բան վկից նրա վրա, խփեց, տրորեց, վորորեց, և նա, այլևս առանց իրեն գիտակցելու, բայց գդալով, վոր գեռ ապրում ե, թռավ մի ինչ վոր նարնջագույն, ֆշացող անդունդի վրայով...

ՀՀ Ազգային գրադարան



NL0328035

30 ԿՈԴ.

22324

Цена 30 коп.

Х. 3.



А. ФАДЕЕВ

ТРИ СМЕРТИ

Отрывки из „Разгрома“
(перев. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.

